

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Գաբրիելյան Մխիթար, Դաբաղյան Արտակ,
Թադևոսյան Աղասի, Մարգարյան Նիկոլ**

**ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ներածություն

Անկախության ձեռք բերումից հետո Հայաստանի համար ամենից բնութագրական երեւոյթը կյանքի բոլոր ոլորտների փոփոխականութիւնն է: Փոփոխականութիւնն ինքնին դրական երեւոյթ է, սակայն կարելի է, երբ դա կազմում է բնականոն վերարտադրական գործընթացի մաս: Սակայն, եթե փոփոխութիւնները տեղի են ունենում այդ համատեքստից դուրս, դրանք սկսում են առաջացնել անորոշութեան միջավայր, որում խաթարվում է հանրութեան՝ այդ թվում նաեւ էթնիկ հանրութեան առանձին հատվածների միջեւ հոգեւոր ընդհանրականութիւնը: Ծեւավորող արժեքային համակարգի համախմբիչ դերը: Նշվածի հիմնական պատճառն արագ կատարվող փոփոխութիւնների ընթացքում համընդհանուր /համազգային, համահասարակական/ դերակատարութեան արժեքների ձեւավորման բարդութիւնն է:

Ստեղծված ոչ կայուն իրավիճակը խոչընդոտում է նաեւ նման դերակատարութեան արժեքների վերարտադրութեանը, քանի որ հաճախ ներմուծվող ժամանակավոր արժեքները նեղացնում են համընդհանուր գործառնութիւնը ունեցող արժեքների հանրային ընդգրկման շրջանակները: Վերջին տարիներին արժեքային գործընթացների ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ հայկական՝ հատկապէս հայրենիքում բնակվող հատվածի ընդհանրականութիւնը ձեւավորող արժեքային համակարգում նկատվում են որակական փոփոխութիւններ՝ հոգուտ մասնավոր բնութեան խմբակային արժեքների եւ ի վնաս հանրային միասնակութիւնը սոսնձող արժեքների:

Դրա պատճառներից մեկն, անշուշտ, խորհրդային համակարգի փլուզումն էր, քանի որ խորհրդային շրջանում Հայաստանում ազգային արժեքային համակարգի բովանդակութեան մեջ ներմուծվել էին բավականին մեծ թվով խորհրդային իրականութեան հոգեւոր արժեքային ընդհանրականութիւնը ձեւավորող գաղափարախոսական տարրեր: Խորհրդային համակարգի փլուզումից հետո, երբ ընթացիկ գործընթացները հախուռն ձեւով մերժում եւ դուրս էին մղում արժեքային համակարգի այդ տարրերը, Հայաստանի ազգաբնակչութեան որոշակի շերտեր՝ հատկապէս բարձր տարիքային խմբերի ներկայացուցիչները, հայտնվեցին արժեքային դատարկութեան իրավիճակում: Սկզբում նման իրավիճակում հայտնվեց տարիքային այս խումբը, ինչը, սակայն, հետագա տարիներին տարածվեց հասարակութեան ավելի ու ավելի լայն շրջանակներում: Դրա հիմնական պատճառն այն էր, որ արժեքային վերարտադրական գործընթացներում ազգային հանրութեան եւ Հայաստանում բնակվող հասարակութեան այլ օղակների համար համերաշխութիւն եւ համախմբում ձեւավորող համընդհանուր բնութեան արժեքների տեսակարար կշի-

ըը խիստ նվազեց:

Խորհրդային համակարգի փլուզումից հետո որդեգրված «շոկային թերապիայի» հետեւանքով Հայաստանում արագ տեմպերով ընթացան տնտեսական եւ սոցիալական բնույթի փոփոխություններ, որոնք, բնականաբար, ձեւավորում էին հասարակության նոր շերտեր եւ խմբեր, որոնց շահերը հաճախ սոցիալ-տնտեսական հարթությունում չէին համընկնում: Այսինքն, հասարակությունն արագ կարգով ենթարկվում էր շերտավորման եւ ըստ նոր ձեւավորվող խավերի՝ աստիճանակարգման: Բնականաբար, նշվածը հանգեցնում էր եւ շարունակում է հանգեցնել նաեւ նոր արժեքային ընկալումների ձեւավորման՝ ըստ ընթացող շերտավորման ու աստիճանակարգման գործընթացների: Սակայն, այնպիսի արժեքների վերարտադրությունը կամ արտադրությունը, որոնք կարող էին միավորել հանրության նոր ձեւավորվող բոլոր շերտերին՝ որպես մեկ պետության սահմաններում ապրող քաղաքացիների, նոր ձեւավորված էլիտար խմբերին չէր հետաքրքրում բացարձակապես: Հետեւաբար այդ խնդիրը նորահայտ էլիտայի կողմից որպես անցումային շրջանի կարեւորագույն խնդիր ոչ՝ ձեւակերպվեց եւ ոչ՝ էլ դրվեց առաջնահերթությունների ցանկում: Դրա հետեւանքն անցած տաս տարիների ընթացքում եղավ այն, որ հայաստանյան հասարակության մեջ գնալով ավելի մեծ դեր ստացան տարանջատող խմբային արժեքները, քան համախմբող հանընդհանուր՝ ազգային, պետական ու քաղաքացիական բովանդակության արժեքները: Ստեղծված իրավիճակն էլ ավելի բարդացրեց արդեն կայուն քաղաքական, տնտեսական եւ արժեքային համակարգեր ունեցող հզոր պետությունների հետ Հայաստանի բաց հարաբերությունները եւ նրանց տարբեր տնտեսա-քաղաքական, հասարակական-մշակութային կազմավորումների մուտքը Հայաստան: Սրանց հոսքը, բնականաբար, իր հետ բերեց նաեւ ուղեկցող արժեքային տարրեր, որոնք հայաստանյան հանընդհանուր արժեքային դաշտի բացակայության պայմաններում նույնպես նպաստեցին հասարակության արժեքային միասնականության պառակտմանը:

Ինքնահոսի թողնված արժեքային դաշտի ձեւավորման գործընթացում թուլացան նույնիսկ հայ հանրույթի համար պատմականորեն կայուն դերակատարություն ունեցած այնպիսի պատմական գործոններ, ինչպես, ասենք, էթնոմշակութայինը եւ եկեղեցականը: Մի կողմից անուշադրության մատնված մշակութային գործընթացները, իսկ մյուս կողմից եկեղեցու հանրային անբավարար դերակատարությունն ու հեղինակությունը նպաստեցին հայ ազգի համար ինքնությունը պայմանավորող առանցքային նշանակության կրոնա-դավանաբանական ոլորտ օտարածին հոսանքների ներթափանցմանը: Տարբեր աղանդների ձեւով նրանք գտան բավական մեծ խոպան դաշտ: Անշուշտ,

խոսքը եկեղեցուն մեղադրելու մեջ չէ միայն, սակայն այն, որ աղանդներն իրենք ազատորեն, առանց հայ առաքելական եկեղեցու ազդեցիկ դիմադրության, ներթափանցեցին հայկական միջավայր, վկայում է այն մասին, որ եկեղեցին ազգին հոգեւոր սնունդ մատուցելու եւ հոգեւոր միասնականությունը ապահովելու տեսանկյունից դեռեւս բավականաչափ պատրաստ չէր: Դրանում, անշուշտ, հսկայական էր խորհրդային շրջանում եկեղեցու դերի նվազեցումը եւ եկեղեցու թուլացումը: Ինքը, եկեղեցին, կարիք ունի ներկայումս օժանդակության հոգեւոր դաշտում իր երբեմնի ազգային համախմբիչ առաջնորդի դերակատարությունը վերականգնելու համար: Ավելի քան տասնամյա անցումային շրջանում դեռեւս չեն ձեւավորվել նաեւ ազգային ընդհանրականությունն ապահովող բարոյականության այն նորմերը, որոնք պայմանավորում են իրենց հայրենիքին հայերի նվիրվածությունը, պետության նկատմամբ քաղաքացիական կեցվածքը, պետական կառույցների ու խորհրդամիջների հանդեպ հարգանքը եւ նվիրվածությունը, իսկ որ ամենից կարելորդ է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու պատվի զգացումը: Ցավալի իրականություն է, սակայն Հայաստանում հայերն իրենց ավելի պատվազուրկ են զգում, քան այն երկրներում, ուր հաճախ արտագաղթում են Հայաստանից:

Բարոյական, հոգեւոր միասնականությունը եւ դրանք պայմանավորող արժեքային համակարգի բացակայությունն ազգային անվտանգության տեսանկյունից առանցքային վտանգ ներկայացնող խնդիրներ են: Այն պարզ պատճառով, որ նույնիսկ ամենից սպառազինված բանակ եւ ավտորիտար համակարգ ունենալու դեպքում անգամ, եթե պետության բնակիչների մոտ բացակայում է տվյալ երկրի քաղաքացու բարոյականությունը, որը վերաբերում է ինչպես հասարակ բնակիչներին, այնպես էլ էլիտային /այդ թվում իշխանության վերին օղակներին/, ցանկացած պահի կարելի է կորցնել ինքնիշխանությունը: Պետական ինքնիշխանությունն առաջին հերթին պայմանավորվում է տվյալ երկրի ժողովրդի բարոյական եւ հոգեւոր միասնականության գործոնով, որը թույլ է տալիս դրա հիման վրա ձեւավորելու նաեւ պետության պաշտպանությունն իրականացնող մարտունակ բանակ: Ուստի, այսօր Հայաստանի ու առաջին հերթին կառավարող էլիտայի առջեւ կանգնած անվտանգության ոլորտի առաջնային խնդիրներից է նախ՝ հոգեւոր միասնականության եւ ընդհանրական բարոյականության ձեւավորումը երկրում, երկրորդ՝ դրա հիման վրա հոգեւոր անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքականության մշակումը:

Ինչպես նշվեց, հոգեւոր եւ բարոյական դաշտի ձեւավորման գործում առաջնային կարեւորության խնդիրն արժեքային այնպիսի համակարգի առկայությունն է, որն ապահովում է ազգի եւ, ընդհանրապես, Հայաստանի հա-

սարակության համախմբվածությունը եւ հոգեւոր-արժեքային ընդհանրակա-
նությունը: Ուստի, առաջարկվող հետազոտության մեջ առանցքային կարեւո-
րության հարցերից մեկը կլինի հենց արժեքային գործընթացների վերլուծու-
թյունը եւ համապատասխան հետեւությունների ներկայացումը:

Հետազոտությունը, քանի որ սահմանափակ է ծավալով եւ չի կարող մեծ
տեղ հատկացնել առանձին տարրերի մանրամասնած ներկայացմանը, նպա-
տակուղղված է վեր հանելու այն հիմնական սկզբունքները եւ ձեւակերպելու
դրանցից բխող հիմնադրույթները, որոնք պետք է ընկած լինեն արժեքային,
հոգեւոր-բարոյական ոլորտում պետության կողմից տարվող քաղաքականու-
թյան հիմքում:

Այս հետազոտությունը ենթադրվում է, որ պետք է

- նախ՝ փորձի, պատկերավոր ասած, «ախտորոշել» վերջին տասը տարի-
ների գործընթացների հետեւանքով ստեղծված իրավիճակը,
- երկրորդ՝ գնահատի ստեղծված իրավիճակում հոգեւոր միասնականու-
թյունը պահպանող առանցքային գործոնները,
- երրորդ՝ ուսումնասիրի այն գործոնները, որոնք քայքայիչ դեր են կատա-
րում հոգեւոր-բարոյական համընդհանուր դաշտի ձեւավորման տեսանկյու-
նից,
- չորրորդ՝ հետազոտի դրանց վերացման հնարավոր մեխանիզմները եւ հո-
գեւոր-բարոյական կառուցողական միջավայրի ձեւավորման ներքին ռե-
սուրսներն ու մեխանիզմները,
- հինգերորդ՝ ներկայացնի առաջարկություններ՝ հոգեւոր-բարոյական մի-
ջավայրի ձեւավորման ոլորտում պետական քաղաքականության սկզբունք-
ների հստակեցման վերաբերյալ:

1. Արժեքային գործընթացները եւ միտումները

Վերջին տարիների հասարակագիտական եւ ազգագրական դաշտային հե-
տազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում առկա արժեքային դաշ-
տը գործառույթային տեսանկյունից կարելի է տարաբաժանել իրական եւ իդե-
ալական արժեքների¹, իսկ կառուցվածքային տեսանկյունից՝ անհատական,
խմբային և հանրային /հասարակական, ազգային եւ պետական/:

Ի սկզբանե աշխատանքում կիրառվող առանցքային հասկացություններում
հստակություն մտցնելու նպատակով, նախ՝ փորձենք ձեւակերպել, թե ի՞նչ
նկատի ունենք «արժեք» հասկացության տակ: Արժեքներն այն երեւույթներն
են, որոնք կողմնորոշիչ դեր են կատարում մարդկանց համար՝ իրենց անհատա-
կան, խմբային կամ հանրային գործունեությունը նպատակաուղղելու տեսանկ-
յունից: Այս աշխատանքում «արժեք» հասկացության սահմաններն ընդգրկում
են նաեւ հանրույթի մշակութային, տնտեսական, քաղաքական եւ հասարակա-
կան իրողության վերարտադրական մեխանիզմները: Հանրույթի արժեքային
դաշտն իր վերարտադրական բնույթի պատճառով ունի շարժընթաց բնույթ եւ
չի կարող քարացած ու դոգմատիկ լինել: Հետեւաբար, բնական պետք է համա-
րել նրանում կատարվող բացասական կամ դրական փոխակերպումները: Նկա-
տենք նաեւ, որ աշխատանքում «հանրույթ» հասկացությունն ավելի լայն սահ-
մաններ ունի քան «հասարակություն»-ը, այն պատճառով, որ հանրույթը կա-
րող է լինել էթնիկ, կրոնադավանաբանական, հասարակական եւ այլ տիպերի:

Աշխատանքում կիրառվում է նաեւ «արժեքային ընկալումներ» հասկացու-
թյունը, որի տակ նկատի է առնվում արժեքներին ու դրանց վերարտադրության
մեխանիզմներին վերաբերող հանրային գիտելիքները, դրանց գնահատման
չափանիշներն ու մեխանիզմները:

Ինչ վերաբերում է արժեքների անհատական, հասարակական եւ էթնիկ տե-
սանկյուններին, ապա պետք է նշել, որ դրանց զուգահեռ մենք առանձնացնում
ենք նաեւ ունիվերսալ արժեքներ եւ համամարդկային արժեքներ ձեւակեր-
պումները: Ունիվերսալ արժեքների տակ հասկացվում են այն արժեքները,
որոնք գործառական են կառուցվածքային տեսանկյունից արժեքային բոլոր

¹ Մշակույթի իրական եւ իդեալական արժեքային հարթությունների մասին մեր պատկե-
րացումները մոտ են մշակութային մարդաբանության մեջ արտահայտված որոշ տե-
սանկյուններին, սակայն մույնական չեն: Steu` Klachon C., Patterning as Exemplified in
Navaho Culture, Language, Culture and Personality, Manasha, 1941. Sapir E., Unconscious
Patterning of Behavior in Society / Selected Writings of Edward Sapir, Berkeley, Mardoc
G.P., Culture and Society, Pittsburgh, 1965, pp. 32-33.

հարթություններում:

Ինչ վերաբերում է իրական եւ իդեալական արժեք ձեւակերպմանը, ապա իրականի տակ նկատի ունենք այն արժեքները, որոնք գործառական դեր ունեն մարդկանց վարքում եւ կողմնորոշում են այն, իսկ իդեալականի տակ՝ այն արժեքները, որոնք մարդկանց կողմից նշվում են որպես արժեքներ, սակայն կիրառական չեն ու կողմնորոշիչ գործառույթի առումով վերնաշենքային դեր ունեն:

Ըստ մեր ազգագրական դիտարկումների, իրական արժեքների շարքում ամենից հաճախ նշվում եւ առաջնային կարեւորություն է տրվում.

1. Փողին ու նյութական բարեկեցությանը:
2. Ուժին ու ազդեցիկությանը, ազդեցիկ դիրք ապահովող պաշտոնին:
3. Ընտանիքին, վաստակ ապահովող աշխատանքին:
4. Երեխաների ապագային, հարազատներին:
5. Առողջությանը:
6. Կրթությանը:

Ինչ վերաբերում է իդեալական արժեքներին, ապա դրանք, ըստ մարդկանց կողմից տրված կարեւորության աստիճանի, կարելի է դասակարգել հետեւյալ հերթականությամբ՝

1. Ազգ, հայրենիք:
2. Օրենք, կարգ ու կանոն:
3. Մշակույթ եւ գիտություն:
4. Ազգային պատմություն եւ պատմական հուշարձաններ:

Դիտարկումները ցույց են տալիս նաեւ, որ հայաստանյան հանրային հարաբերությունների կազմակերպման գործում իդեալական արժեքների դերակատարությունը զգալիորեն նվազել է եւ այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ազգը, հայրենիքը, մշակույթը, գիտությունը, ազգային պատմությանը, պատմական արժեքները, հանրային վարքում ստորադասվում են իրական այնպիսի արժեքների ինչպիսիք են՝ փողը, նյութական շահը, ազդեցիկ դիրք ապահովող պաշտոնը, նեղ ընտանեկան կամ ազգակցական ու մասնավոր կապերով պայմանավորված այլ խմբակային շահերը²: Մենք հակված չենք համաձայնելու այնպիսի տարածված կարծիքի հետ, թե դրա պատճառը միայն սոցիալական վիճակի վատթարացումն է: Վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել առանցքային գործոնը ձեւավորվող նոր էլիտայի /հատկապես կառավարող էլիտայի/ դերակատարությունն է ու հանրային հարաբերությունները պայմանավորող հասարակական համագործակցության տիպերի առանձնահատկությունը:

Իրական եւ իդեալական արժեքների գործառույթյան ուսումնասիրությունը

հնարավորություն է տալիս բացահայտելու եւս մեկ կարեւոր առանձնահատկություն: Իրական արժեքներն առավելապես գտնվում են մասնավոր շահերի հարթության վրա կամ հասարակության մեխանիկական համագործակցության դաշտում, իսկ իդեալականը՝ հանրային: Չեղարկելով, եթե առաջինների գործառույթյան համար որպես դերակատար կարող է հանդես գալ անհատը կամ մեխանիկական խումբը, ապա երկրորդի համար պահանջվում է ավելի զարգացած հասարակական համագործակցության տիպով /օրգանական կամ վերացական/ բնորոշվող հանրույթ: Չանրույթում նման զարգացած հասարակական տիպերի բացակայությունը վերջին տարիներին Չայաստանում ձեւավորել է միտումներ, որոնք տանում են իդեալական արժեքների դերի նվազեցմանը հանրային հարաբերությունների կազմակերպման մեջ: Այդ պատճառով վերջին տարիներին հայաստանյան հասարակության արժեքային համակարգում նկատվում է իդեալական արժեքների գործառական դերակատարության ծայրաստիճան անկում, ինչը դրանք վեր է ածել հիմնականում խոսակցական դատողության մակարդակում կարեւորվող արժեքներին:

Կարելի է ասել, որ իրական եւ իդեալական արժեքային դաշտում վերը ներկայացված իրավիճակն առավելապես նպաստում է կառուցվածքային տեսանկյունից սեզմենտար /անհատական եւ մեխանիկական խմբակային արժեքների/, քան համախմբող /ազգային, հասարակական եւ ընդհանրապես՝ հանրային/ արժեքների վերարտադրությանը մի կողմից եւ մյուս կողմից՝ համախմբող արժեքների ստորադասմանը սեզմանտար արժեքներին:

Նշված իրավիճակի ձեւավորման, մեր կարծիքով, դեռեւս չգիտակցված անուղղակի պատճառներից է վերջին տարիներին Չայաստանում տարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Վերջինիս հետեւանքով ձեւավորված իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ խիստ նեղացվել է հասարակության լայն շրջանակների տնտեսական գործունեության նպատակը՝ հանգեցնելով այն ընտանիքի գոյատեւման պահանջմունքների բավարարման խնդրին: Բնակչության շուրջ 80 %-ի տնտեսական գործունեությունն ուղղված է ընտանիքի առաջնային կարիքների /սննդի, հագուստի եւ բնակարանի ջեռուցման/ նվազագույնի բավարարմանը³: Չայաստանի բնակչության գոյատեւման ռազմավարության առանձնահատկությունն այն է, որ նմանատիպ խնդիրն իրականացվում է հիմնականում անհատական, ընտանեկան կամ նեղ մեխանիկական խմբակային միավորումների միջոցով: Սրա բացասական կողմն

3 . Պաշտոնական տվյալներով այս թիվը հասնում է 68 %-ի, սակայն անկախ փորձագետները նշում են 80%: Պաշտոնական տվյալները տես՝ «Չայացք նտեսությանը», ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոնի տեղեկագիր, թիվ 3, էջ 3:

² Դաշտային ազգագրական նյութեր, 1989- 2000 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ /այսուհետեւ՝ ԴԱՆ/

այն է, որ չեն ստեղծվում հանրային համախմբմանը նպաստող հասարակական տնտեսական միավորումներ՝ համապատասխան արժեքային ընկալումներով եւ նպաստում են սեզմանտար արժեքների կշռի մեծացմանը:

Փաստորեն, պետական քաղաքականության հետեւանքով բնակչության տնտեսական համագործակցության հիմնական նպատակը հանգեցվել էր առանձին ընտանիքների գոյատեւման խնդիրներին, այն դեպքում, երբ էթնոքաղաքական համագործակցության դաշտում խնդիրը ազգային պետության ինքնիշխանության եւ տարածքների պաշտպանությունն է:

Նշվածն ընդհանրացնելու դեպքում կարելի է ասել, որ հայաստանյան հանրության համագործակցությունը եւ համակեցությունը կազմակերպվում է երկու հիմնական հարթություններում՝

ա/ մեխանիկական, որը հենվում է մասնավոր շահերի հիման վրա ձեւավորվող շրջանակների վրա /ազգակցական, ընկերական, կլանային եւ այլն/,

բ/ վերացական, հիմնված հիմնականում ազգային-քաղաքական բնույթի գաղափարների վրա /հայրենիք, անկախություն, ինքնիշխանություն/:

Միջազգային հանրության փորձը ցույց է տալիս, որ համագործակցության ներկայացված պատկերի բնականոն դառնալու համար պակասում է եւս մեկ հարթություն՝ օրգանական հարթությունը, որը հիմնականում հենվում է հասարակության մասնագիտական զբաղվածության գործոնի վրա:

Համագործակցության այս ձեւը պայմանավորում է հասարակության մեջ հեղինակավոր դերերի աստիճանակարգմանը՝ նրա անդամների ներդրմանը համարժեք, հետեւաբար եւ պայմանավորում է աստիճանակարգման համակարգը եւ աստիճանակարգումը պայմանավորող արժեքների ձեւավորումն ու գործառնությունը:

Հարկ է նկատել, որ համագործակցության այս տիպը միջանկյալ դիրք է գրավում մեխանիկականի ու վերացականի միջեւ: Դրա միջոցով է իրականացվում մեխանիկական արժեքների /անհատական, խմբային, ազգակցական եւ այլն/ համաձայնեցումը համընդհանուրին եւ սնուցելով հասարակության վերացական /գաղափարական, հոգեւոր, բարոյական/ համագործակցության հարթությունը՝ նպաստում արժեքային դաշտում հասարակական համընդհանուր նշանակության արժեքների գերակայության գիտակցմանն անհատական կամ մեղ խմբային արժեքների նկատմամբ: Վերջապես, հասարակական համագործակցության այս ձեւն է, որ պայմանավորում է հանրության խմբային միավորումների միջոցով համագործակցող կառույցից վկույցի-ան դեպի հասարակական միավորումների միջոցով գործող համագործակցություն:

Մեր կարծիքով, աշխատանքի մասնագիտական հիմքի վրա կառուցված

օրգանական համագործակցության ձեւի միջոցով է նաեւ, որ հնարավոր է դառնում էթնիկ հանրության անցումը «ժողովուրդ» տիպից ավելի զարգացած հասարակական կառույցով բնորոշվող «ազգ» տիպին:

Անցումային շրջանում որդեգրված տնտեսական քաղաքականությունն արժեքային փոխակերպումների տեսանկյունից թողեց մեկ այլ լուրջ և բացասական հետեւանք: Անցած տասը տարիների ընթացքում խիստ նվազեց զբաղված բնակչության մասնագիտական բազմազանությունը: Դա հանգեցրեց գլխավորապես մասնագիտական գործոնով պայմանավորված հասարակական օրգանական համագործակցության ձեւերի աղքատացմանը, դրա հետ միասին՝ նաեւ այն ուղեկցող ողջ արժեքային դաշտի «գունաթափմանը»⁴:

Հասարակության մեջ անհատի շարժունությունն ապահովող այդպիսի արժեքների վարկանիշի անկումը՝ հասարակական դերերի եւ կարգավիճակի սանդղակում, պայմանավորեցին արժեքային այն անորոշությունը, որը ներկայումս խոչընդոտում է հանրությանը համախմբող արժեքային միջավայրի ձեւավորմանը: Նշված բնույթի արժեքների հետ միասին արժեգրկվեցին նաեւ այն հասարակական դերերը, որոնք պայմանավորում էին անձի շարժունության հնարավորությունն ըստ հասարակության մեջ ունեցած զնահատելի կարգավիճակի⁵: Այս տարիներին աստիճանական արժեգրկման ենթարկվեց գիտելիքի, մասնագիտական հմտության, ազգային խորհրդանիշների, ազգային գաղափարների, պետական հաստատությունների, հայրենիքի, քաղաքական կուսակցությունների ու նրանց գործունեության արժեքային վարկանիշը: Զուգահեռաբար, մի շարք պատճառներով գերարժեգործման ենթարկվեցին փողի, մեխանիկական կամ ազգակցական, նյութական կարողության, աշխատանք եւ վաստակ ունենալու, բարեկամ կամ ծանոթ լինելու գործոնները: Հատկապես խիստ աճեց փողի արժեքային վարկանիշը: Կարելի է ասել, որ փողի, որպես արժեքի, գերազնահատումը հանգեցրեց հասարակական համագործակցության արժեքային դաշտում դրա գործառնության այլասերմանը: Կարելի է ասել, որ դրանում առանցքային դեր խաղաց Հայաստանում ձեւավորված սոցիալ-տնտեսական պատճառներով պայմանավորված համատարած գոյատեւման իրավիճակը: Դրա հետեւանքով հասարակությունը մասնատվեց «գոյատեւման» խմբերի, որոնցում մարդիկ վաստակելու խնդիրը

⁴ . Այս երեւոյթների փոխկապվածության մասին տես՝ Манхейм К., Диагноз нашего времени, М., 1994, с. 418.

⁵ . Շարժունության երեւոյթի մասին մեր մտտեցումները մոտ են՝ Барбер Б., Структура социальной стратификации и тенденции социальной мобильности / Американская социология, М., 1972, сс. 235-248.

ստիպված էին լուծել ոչ այնքան մասնագիտական կարողությունների իրացման, որքան հիմնականում առևտրի միջոցով: Չենց բնակչության մեծամասնության զբաղվածության տեսանկյունից առևտրականցումն էլ դարձավ Հայաստանում հանրության օրգանական համագործակցության տիպի ներկայիս սնանկ իրավիճակի պատճառը:

Խնդիրն այն է, որ առևտրական գործունեության հիմնական նպատակը դրանք շարժընթաց կամ գոնե պարզ ձևով վերարտադրելն է, այլ ոչ արժեքներ ստեղծելը: Չեղարար, կարելի է տրամաբանական համարել, որ առևտրական գործունեության մեջ ներքաշված զբաղված բնակչության մեծ մասի համար փողի, որպես գերաժեքի, ընկալումը բխում է նրա տնտեսական գործունեության նպատակից՝ դրամից:

Նշվածի վկայությունը կարելի է համարել նաև այն, որ ըստ մեր հետազոտության տվյալների, Հայաստանում բնակչության շուրջ 81 %-ը աշխատանք ունենալու տակ հասկանում է ոչ թե մասնագիտական կարողությունների իրացում, այլ ցանկացած զբաղմունք, որը կապահովի ընտանիքի գոյատևման համար անհրաժեշտ դրամական վաստակ: Արժեքային ընկալումների ազգագրական հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին հայաստանյան հանրություն գերիշխող է դարձել այն համոզմունքը, որ ցանկացած արժեք հնարավոր է ձեռք բերել փողով: Սակայն, մեր կարծիքով, առավել բացասական է այն մտայնությունը, որ եթե կա արժեք, որը ենթակա չէ փողով գնելուն, ապա դրա արժեքային հատկությունը կարող է կասկածի տակ դրվել:

Սա, թերևս, մեր արժեքային ընկալումներում տեղի ունեցող փոխակերպումների ամենից վտանգավոր դրսևորումն է, քանի որ դա ցույց է տալիս, որ հատկապես հանրության հոգեւոր ընդհանրականությունը ձեւավորող արժեքները կարող են կորցնել իրենց դերակատարությունը, եթե դրանց որպես համարժեք հակադրվում է փողը⁶: Սա նշանակում է, որ ցանկացած հարուստ օտարերկրյա կառույց կամ անհատ կարող են փողի գործադրման միջոցով ազդել մեր հանրության հոգեւոր ընդհանրականությունը ձեւավորող արժեքային դաշտի վրա եւ նպաստել այնպիսի երեւոյթների արմատավորմանը, որոնք կարող են քայքայիչ դերակատարություն ունենալ համընդհանուր խնդիրների շուրջ միավորման վրա, հետեւաբար եւ մասնատել հայաստանյան հանրույթը ճակատագրական նշանակության հիմնահարցերի լուծման ժամանակ: Ըստ էության, դրա վկայություններն արդեն կարելի է տեսնել թե՛

⁶ . Փողի հասարակական եւ արժեքային գործառնությունների մասին տես՝ Фуко М., Слова и вещи. Археология гуманитарных наук, М., 1996, сс. 193-217.

աղանդավորական շարժումների եւ թե՛ հասարակական օտարածին այնպիսի միավորումների գործունեության մեջ, որոնք նպաստում են հանրության մասնատմանը՝ արժեքային սեզմնետար բնույթի այլընտրանքներ տարածելու միջոցով:

Կարելի է եզրակացնել, որ հասարակական համագործակցության կառույցում վերջին տարիներին կատարված փոփոխությունների արդյունքում փոխվել է իրական եւ իդեալական արժեքների համամասնական դերակատարությունը: Գործառնային տեսանկյունից հասարակական եւ էթնիկ համագործակցության կառույցի համար գերակայող են դարձել մասնավոր բովանդակություն ունեցող իրական արժեքները: Դրա հետեւանքով հասարակական փոխհարաբերություններում թուլացել է արժեքման հանրային բովանդակությունը: Այս գործընթացն իր հերթին նպաստում է հասարակական եւ ազգային համերաշխության միջավայր ձեւավորող օրգանական եւ վերացական բնույթի արժեքներից արժեքային դաշտի բեռնաթափմանը՝ սահմանափակվելով կոմունիկատիվ տեսանկյունից ցածր որակներ ներկայացնող մասնավոր բնույթի մեխանիկական արժեքների գերակայությամբ:

Խորհրդային համակարգի փլուզմանը զուգահեռ, մեր արժեքային համակարգի վրա ազդող մեկ այլ կարեւոր գործոն պետք է համարել նոր արժեքային միջավայրի ձեւավորման նպատակի սխալ ձեւակերպումը: Խոսքը վերաբերում է նրան, որ այս փուլում փոխակերպումների նպատակի ձեւավորման մեջ գերիշխող մոտիվացիան խորհրդային արժեքների եւ արգելքների վերացումն էր: Այսինքն, ազգային արժեքների «վերակենդանացումը» ու դրա կարեւորումը տեղի էր ունենում գլխավորապես ոչ թե այն հիմնավորմամբ, որ դրանք կարող են կառուցողական դեր կատարել ազգային ինքնության պահպանման եւ վերարտադրության համար էթնիկ հանրության համախմբելու գործում, այլ պարզապես, որ դրանք արգելված են եղել ԽՍՀՄ տարիներին: Ընդհանրապես, ազգային արժեքների վերականգնումն անկախության ձեռք բերման շրջանում բնութագրվում էր խորհրդային արգելքներից ազատվելու ցուցադրականությամբ, խորհրդանշանությամբ, ինչն էթնիկ համերաշխության հիմքը կազմող արժեքային դաշտում թուլացում էր արժեքային ռացիոնալացումը եւ կառուցողականությունը: Այդ տարիներին անկախության մեր մղումը բանաձեւելու դեպքում կարելի է ներկայացնել որպես ավելի շատ «ազատություն ինչ-որ բանից» քան «ազատություն հանուն ինչ-որ բանի»: Արժեքային «հեղափոխության» շրջանը, որի սկիզբը կարելի է համարել 1988-1990 թվականները, էթնիկ հանրության համախմբման իրական քաղաքական նպատակին զուգահեռ, հազեցված էր նշանային երեւոյթներով եւ ավելի քիչ իրական հիմքեր ունեցող արժեքներով: Այդ պատճառով, ազգային զարթոնքի տպավոր-

րություն ձեւավորող համախմբվածությունը եւ միասնականությունը հանրահավաքների դադարեցումից հետո շատ կարճ ժամանակում փլուզվեց, քանի որ նշանային համախմբվածությունը չփոխարինվեց արժեքային համախմբվածությամբ:

Փաստորեն, հայաստանյան հանրույթի հանրահավաքային համագործակցության եւ դրան հաջորդած պետականության ձեռք բերման շրջաններում չձեւավորվեցին սոցիալ-տնտեսական, քաղաքական, հասարակական այնպիսի հիմքեր եւ կառավարման մեխանիզմներ, որոնք նպաստելով էթնոսի ստեղծագործական կամ կառուցողական ներուժի բացահայտմանը եւ դրսևորմանը, կապահովեին իրական գարթոնք: Այսինքն, չձեւավորվեցին գարթոնքի եւ զարգացման այն պայմանները, որոնք կարող էին խթանել էթնիկ հանրույթի ստեղծագործական հատկանիշների դրսևորումը, էթնիկ հանրույթի համախմբումն ուղղվեց հիմնականում ինչ-որ բան կործանելուն կամ ինչ-որ բանի լծից ազատվելուն: Յենց զարգացման, որպես նպատակի ձեւակերպման բացակայությունն էլ ներկայումս հանգեցրել է հայաստանյան հանրույթի ստեղծագործական համախմբումն ապահովող արժեքային դաշտի անկատարությանը:

Այս շրջանի վերլուծությունը ցույց է տալիս, որ նման խնդրի ձեւակերպման արժեքային հիմքեր, այնուամենայնիվ, առկա էին: Արդեն անկախության ձեռք բերման նպատակի տակ այդ ժամանակ ժողովուրդը դնում էր ազգային այնպիսի պետության ձեւավորումը, որը կերաշխավորի Յայաստանի բոլոր բնակիչների համար հավասար հնարավորությունների ապահովում եւ արդարություն: Յանրության կողմից հենց այսպիսի վերցական արժեքային դաշտում էր իմաստավորվում անկախ պետականության հաստատումը: Սակայն, անկախության ձեռք բերումից հետո իշխանություն ստացած վերնախավի հրաժարումը հանրային գաղափարախոսական այս հենքից եւ դրան մասնավոր խմբակային գերակայությունների հակադրումը խոչընդոտեց հանրության համախմբմանը կառավարող էլիտայի շուրջ եւ հանգեցրեց «արժեքային հուսախաբության»: Սա այն հիմնական գործոններից էր, որը կասեցրեց մեր հասարակության մեջ համախմբող համընդհանուր արժեքների ձեւավորման ու արմատավորման գործընթացի խորացումը ու նպաստեց հանրության պառակտմանը, սկզբում իշխանություններ-ժողովուրդ խմբերի, իսկ հետո նաեւ մասնավոր արժեքներով առաջնորդվող մեխանիկական միավորումների: Վերջապես, սրա հետեւանքում ներկայումս արգելակվում է հանրային արժեքների կարելուումը եւ դրանց համապատասխան հասարակական ու ազգային կառույցների ու հաստատությունների ձեւավորումը:

Ստեղծված իրավիճակում, երբ ինչպես վերը ցույց տրվեց, հասարակու-

թյան մեջ գերիշխող են դառնում նաեւ գոյատեւման խնդիրները, հայաստանյան հանրույթին միավորող արժեքների դերակատարություն են ստանում գոյատեւման պահանջումներն ապահովող երեւոյթները բնակչության մեծամասնության մեջ, իսկ հասարակությունից օտարված վերնախավում նյութական բարեկեցությունը եւ դրա ապահովությունը երաշխավորող իշխանությունն ու ուժը: Իսկ հանրային համագործակցության հիմնական ձեւը դարձել է մասնավոր շահերով առաջնորդվող խումբը, ինչի հետեւանքով արժեքային իրական գնահատման դաշտը հարմարեցված է մասնավոր շահերով առաջնորդվող մեխանիկական տիպին: Սրա բացասական հետեւանքը զգալի է նաեւ արժեքների վերարտադրության ոլորտում, ուր առաջնային դերակատարությունը կատարում են հենց այն հաստատությունները, որոնք հանրային տեսանկյունից ունեն մեխանիկական բնույթ, հետեւաբար եւ շահագրգռված են ավելի շատ մասնավոր խմբակային բնույթի արժեքների ձեւավորմամբ, քան հանրային եւ ազգային: Յետեւաբար, արժեքային վերարտադրության գործընթացներում դերակատարություն վերցրած շրջանակները, որոնք այսօր հաճախ ներկայացվում են որպես էլիտար շրջանակներ, շահագրգռված չեն համընդհանուր արժեքների վերարտադրության մեխանիզմների ներդրմամբ, քանի որ դրանք հակասում են իրենց մասնավոր շահերի առաջնայնությունն ապահովող արժեքներին: Յետեւաբար, այսօր ազգային-պետական էլիտան իրականացնում է հանրային տեսանկյունից հակաէլիտար գործառույթ՝ ոչ միայն չնպաստելով, այլև խոչընդոտելով հանրային համախմբումը ձեւավորող եւ վերարտադրող արժեքների գործառույթում:

Յարկ է նկատել, որ ներկայումս ձեւավորված մեխանիկական եւ համընդհանուր արժեքներին համապատասխան, տարբերվում են նաեւ հասարակության մեջ առկա արժեքային գնահատման չափանիշները: Եթե մեխանիկական հարաբերություններում արժեքները գլխավորապես բխում են խմբային շահերից ու ամեն ինչ, այդ թվում եւ մարդը, հասարակական կառույցը, պետական հաստատություններն արժեքավորում են խմբի վերարտադրության եւ օգտակարության տեսանկյունից, ապա օրգանական եւ վերացական միջավայրում արժեքային գնահատման չափանիշները համապատասխանեցված են հասարակության յուրաքանչյուր անդամի լիակատար եւ լիարժեք ինքնաիրացմանը: Վերջին դեպքում պետությունը եւ նրա ատրիբուտները հասարակության մեջ ձեռք են բերում առաջնային արժեքում, քանի որ դրանք իրականացնում են բոլոր անդամների ազատության եւ ստեղծագործ հատկությունների դրսևորման հնարավորությունների վերարտադրության եւ հովանավորության երաշխավորի գործառույթ:

Նման արժեքային համակարգը կարող է նպաստել, որպեսզի անձական

շահերը համապատասխանեցվեն հանրայինին, ինչի շնորհիվ հանրային համագործակցության մեխանիզմները կծառայեն մարդկային ստեղծագործ ներուժի դրսևորմանն ու իրացմանը: Սա էլ իր հերթին ձեռավորում է մի իրավիճակ, երբ անհատի համար հասարակությունը եւ հասարակական հաստատությունները, իսկ հասարակության համար՝ անհատը, ձեռք են բերում գերագույն արժեքի նշանակություն: Ահա այս գերարժեքային կողմնորոշումն էլ պայմանավորում է մնացած արժեքների բնույթը եւ ուղղվածությունը, ինչպես նաեւ տվյալ հանրություն արժեքների գնահատման չափանիշները:

Հայաստանում արժեքային գերակայությունների փոփոխման առաջին տարիներին անկախ պետականության գաղափարի արժեքում հիմքում դրված էին հենց նման մոտեցումներ: 1988-1991թթ. հայաստանյան հանրութի համախմբման առանցքային գաղափարներից մեկն այնպիսի պետության ձեռավորումն էր, ուր յուրաքանչյուրի համար Հայաստանը պետք է դառնար ապրելու եւ աշխատելու համար լավագույն միջավայրը: Պետականության նման արժեքումը, սակայն, կառավարող էլիտայի կողմից վարկաբեկվեց, երբ պետական իշխանությունը, հանուն իշխող խմբի խնամակալան նեղ շրջանակների շահերի, օգտագործվեց ընդդեմ հասարակության մեծամասնության: Որդեգրված սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, որի հիմքում հարուստների խավի արագ ձեռավորումն էր, իրականացվեց առանց դրա արժեքային տեսանկյունների եւ հնարավոր հետեւանքների հաշվառման, ինչը հանգեցրեց անօրինական ճանապարհով հարստացողների եւ ունեզուրկների խավերի ձեռավորմանը: Ունեզուրկման ամենաբացասական հետեւանքը հասարակական համագործակցության մեջ խմբակային-մեխանիկական հարաբերությունների եւ դրանք սպասարկող արժեքային գերիշխանության հաստատումն էր: Այս քաղաքականության հետեւանքն է, որ ներկայումս Հայաստանում հասարակության մեծամասնության միջավայրում բոլոր արժեքները հարմարեցված են հիմնականում գոյատեւման նպատակներին կամ նոր գերարժեքի գործառույթ ստացած փողին: Դաշտային ազգագրական հետազոտությունների ընթացքում մեզ հանդիպել են բազմաթիվ դեպքեր, երբ «օրվա հացի» պահանջմունքների բավարարման համար մարդիկ ստիպված են եղել վաճառել շատ ավելի կարելու այնպիսի արժեքներ, որոնք ավելի բարձր մտավոր, հոգեւոր, գեղագիտական եւ նմանատիպ այլ պահանջմունքների բավարարման ոլորտին են վերաբերվում: Կարող է արտառոց հնչել, բայց նույնիսկ ավանդական համարվող գյուղական բնակավայրերում տարածում է ստանում այնպիսի հասարակական կարծիքի ձեռավորումը, որը արդարացում է նույնիսկ սոցիալական դրդապատճառներ ունեցող մարմնավաճառությունը: Արժեքային առումով սրա վտանգավորությունն այն է, որ սոցիալական

դրդապատճառներով կարող են տեղի ունենալ այնպիսի արժեքային փոխակերպումներ, որոնք կարող են հանգեցնել բարոյական արժեքային դաշտի կազմաքանդման, ինչի հետեւանքով գործնականորեն կարող է անիրականանալի դառնալ համակեցության եւ համերաշխության հոգեւոր-բարոյական միջավայրի ձեռավորումը: Արժեքների կորստյան միջոցով կամ արժեքային գիջողականության միջոցով հարմարվողականությունը դառնում է հայաստանյան հասարակության բնութագրական գիծը: Պատահական չէ, որ ժողովրդի մեծամասնությունն այսօր իր իրավիճակը բնութագրում է որպես «յուլա գնալ»: Սակայն «արժեքային զոհաբերությունները» չափազանց խոցելի են դարձնում մեր էթնոհասարակական կառույցը հոգեւոր համախմբվածության տեսանկյունից, քանի որ հարաբերակցական առումով «զոհաբերվող» արժեքները գերակշռորեն հանրային կարելության արժեքներն են: Այդ խոցելիությունը ստեղծել է նպաստավոր պայմաններ, որ հայաստանյան արժեքային միջավայր թափանցեցն օտարածին այնպիսի արժեքներ, որոնք ոչ թե ազգային արժեքային դաշտը համալրում են համամարդկային եւ կառուցողական դերակատարության արժեքներով, այլ մեծացնում են մեր հանրության հոգեւոր միասնականությունը ձեռավորող արժեքային դաշտում կազմաքանդիչ արժեքների ներմուծման հնարավորությունները: Արժեքային նման փոխակերպումների միտումը հատկապես Հայաստանի նման մոնոէթնիկ հանրապետությունում կարող է առաջացնել էթնոմշակութային ընդհանրականության հիմքի վրա ձեռավորվող հոգեւոր-բարոյական դաշտի պառակտում: Իսկ առանց հոգեւոր-բարոյական ընդհանրականության խիստ խոցելի կարող են դառնալ նաեւ ազգային, հասարակական, պետական հաստատությունները ու, վերջապես, ազգային անվտանգության համակարգը:

Հասարակության մեծամասնության մեջ գոյատեւման արժեքային կողմնորոշումների գերիշխանությունը էականորեն ազդել է նաեւ այն հասարակական ցուցիչների վրա, որոնք պայմանավորում են արժեքային ընկալումները: Այսօր մեր հասարակության մեջ իրականում աղքատության գծից ներքեւ գտնվողները, որոնց ընտանիքի ամսական եկամուտը տատանվում է 100-150 ԱՄՆ դոլարի սահմաններում, իրենց աղքատ չեն համարում, քանի որ աղքատ լինելը բացասական է ազդում հասարակական նեղ շրջանակներում նրանց դիրքին ու հեղինակությանը եւ ստեղծում է հասարակական դերային փոխանակային հարաբերություններից մեկուսացման որոշակի վտանգ⁷: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին, չնայած աղքատության մեծ ծավալներին, հասարակության մեջ մասսայականորեն տեղի է ու-

⁷. ՂԱՆ:

նենում սոցիալապես ներկայանալի ցուցիչների «կեղծում»: Այն հիմնականում իրականացվում է կենսապահովման մշակույթի հարթության վրա՝ կենցաղային իրերի սպառման առումով: Դրանք հիմնականում սահմանափակվում են էժանագին, բայց ներկայանալի հագուստների, ինչպես նաեւ կենցաղային սպառման այլ ապրանքների նկատմամբ սպառողական հատկությունների ցուցադրականությամբ: Հատկապես տարածվում է սպառողական ինտենսիվ եղանակները ի հակադրություն էքստենսիվի: Այսինքն, քանակը գերադասվում է որակից: Արժեքային ընկալումների եւ դրանց գնահատման չափանիշների վրա նշվածի բացասական ազդեցությունն այն է, որ աղքատ բնակչության կողմից սպառողական հատկությունների ցուցադրման վրա հիմնված սոցիալական ցուցիչների կեղծումը մրցակցային դաշտ է ստեղծում մեխանիկական խմբերի ներսում, ինչը վերջին հաշվով կամ՝ անհատին պարտադրում է ընդունել խմբի կողմից առաջադրվող ցուցիչների դաշտը՝ դրան համապատասխան արժեքներով եւ գնահատման չափանիշներով, կամ՝, հակառակ դեպքում, մեկուսացնում խմբային միջավայրից՝ մերժելով նրա կողմից ներկայացվող օրգանական կամ վերացական արժեքային պահանջարկը: Նման մրցակցային դաշտը մերժում է ցանկացած անհատական դրսեւորում, քանի որ վերջինս խմբակային միջավայրում ընդունելի ինտենսիվ եղանակին կարող է հակադրել էքստենսիվը կամ սպառողական ցուցիչներից դուրս ավելի բարձր կարգ՝ դրանով իսկ վտանգելով գործող սոցիալական ներկայանալիության ապահովությունը: Հարկ է նշել, որ մեխանիկական խմբի ներսում ցուցիչների ձեւավորումն ընթանում է ընդօրինակման ճանապարհով: Իսկ ընդօրինակման աղբյուրը հիմնականում հասարակության մեխանիկական խմբավորումներում ազդեցիկ ուժային, ֆինանսական, քրեատիպ լծակների տիրապետող «հեղինակություններն» են: Իսկ քանի որ այդ հեղինակությունները, որպես կանոն, խիստ իռացիոնալ ծագում եւ հիմքեր ունեն, որոնք սահմանափակվում են ուժի եւ ֆինանսական կարողությունների տիրապետման չափանիշով, ապա նրանց կողմից շրջանառության մեջ մտցվող արժեքներն էլ ունեն իռացիոնալ բնույթ, քանի որ ընտրվում են գլխավորապես հարստություն եւ ուժ ցուցադրելու պահանջմունքը բավարարելու նպատակով, այլ ոչ՝ տվյալ արժեքի հասարակական եւ մշակութային կյանքում գործառույթի եւ գնահատականին համապատասխան: Այս առումով կարելի է ասել, որ Հայաստանի մեխանիկական գոյատեւման խմբերի բաժանված հասարակական կառույցի արժեքային ընկալումներն ունեն ավտորիտար ծագում, ցուցադրում են ուժ ու հարստություն եւ ենթատեքստային տեսանկյունից ունեն այդ արժեքները կրողներին հիերարխիայի վերին օղակներից ստորին օղակներին եւ ողջ հասարակությունը վախի եւ ունեցվածքային կախվածության մեջ պահելու բո-

վանդակություն: Ահա այս պատճառով մեխանիկական խմբերի առաջադրած արժեքային դաշտը եւ գնահատման չափանիշները մերժողական կեցվածք ունեն ստեղծագործ բնույթ ունեցող եւ անձի ազատությունը խրախուսող ցուցիչների նկատմամբ: Կենսապահովման այսպիսի իրավիճակում ձեւավորվեց վերջին տարիներին Հայաստանում սոցիոնորմատիվ մշակույթի կարելու բաղադրիչը հանդիսացող արժեքային մեխանիկական խմբային ընկալումների եւ արժեքների գնահատման խմբային չափանիշների դաշտը, որն այսօր ներառում է վերը նշած իրական արժեքների հիմնական զանգվածը:

Արժեքային դաշտում իր գերիշխանությունը պահպանելու ու վերարտադրելու համար հասարակության մեխանիկական համագործակցության բուրգի գագաթում հայտնված իռացիոնալ հեղինակությունների ինստիտուտը հասարակության արժեքային դաշտը հարմարեցնում է իր չափանիշներին՝ փողին եւ ուժին, հասարակության սոցիալական շարժունությունը նպաստող այլ արժեքները ենթարկելով դրանց, իսկ հաճախ նաեւ՝ օտարելով դրանք հասարակության իրական արժեքային դաշտից: Այս առումով խիստ ձեւափոխման ենթարկվեց նաեւ հասարակության փոխանակային գործընթացների հարթությունների փոխհարաբերակցությունը: Եթե նախկինում փոխանակային գործընթացներում սոցիալական շարժունություն ապահովում էր տնտեսական, քաղաքական եւ սոցիալ-մշակութային փոխանակային գլխավորապես հասարակական նպատակաուղղվածությամբ գործընթացները եւ դրանց կողմից առաջադրվող արժեքների տիրապետման աստիճանը, ապա ներկայումս փոխանակային գործընթացներում գերիշխում են անձնական եւ խմբային նպատակաուղղվածությամբ գործընթացները՝ համապատասխան արժեքային դաշտով: Այսինքն, եթե նախկինում փոխանակային գործընթացներում արժեքաորվում էր անհատի հասարակական կարելությունը, մշակութային գործունեությունը շեշտող եւ նմանատիպ հատկանիշները, ապա վերջին տարիներին դրանք դուրս մղվեցին նյութական հարստության եւ ուժի հատկանիշները ներկայացնող արժեքների կողմից: Այդ պատճառով խիստ բարձրացավ վերջիններիս դերը անհատի հասարակական հեղինակավոր դիրք ստեղծելու գործում: Այսպես՝ արժեքային դաշտի խմբակայնացման հետեւանքով անկախությանը հաջորդած տարիներին արժեզրկվել են այնպիսի հասարակական դերեր, ինչպիսիք են ուսուցիչ, արվեստագետ, գիտնական, շինարար, հմուտ արհեստավոր եւ այլն: Այսինքն, հասարակության մեխանիկական բնույթի խմբակային համագործակցությանը բնորոշ նոր ձեւափոխված արժեքային փոխանակային գործընթացները հեղինակավոր կարգավիճակի հնարավորություն ստեղծում էին գլխավորապես այն դերերի համար, որոնք յուրացնում էին նոր գնահատման չափանիշներին համապատասխան արժեքները:

Նշվածն ուղղակիորեն անդրադառնում է նաեւ արժեքային վերարտադրման արդի գործընթացների վրա: Խնդիրն այն է, որ արժեքների վերարտադրության եւ վերահսկման գործառնությունը հասարակության մեջ իրականացնում են հասարակայնորեն գնահատելի կարգավիճակ ունեցող խավերը: Իսկ քանի որ նման կարգավիճակ այսօր նվաճել է փողի եւ ուժի տիրապետող խավը, ապա նա շահագրգռված է հենց իր կարգավիճակային ապահովությունը երաշխավորող արժեքների վերարտադրությունն ապահովող մեխանիզմների ստեղծմամբ ու արմատավորմամբ: Մնացած բոլոր արժեքների գործառնությունը պայմանավորված է նշված նոր համակարգին դրանց հարմարեցման եւ ծառայեցնելու հնարավորությունով:

Արժեքային նման իրավիճակների առաջացումը բնորոշ է ավտորիտար քաղաքական եւ տնտեսական համակարգերին, որոնք թույլ են տալիս մշակույթի զարգացումն այնքանով, որքանով այն ծառայում է տվյալ համակարգի պահպանմանը: Կարելի է ասել, որ այսօրվա գործընթացներն արժեքային կառույցում միտում են հայկական ազգային մշակույթը վերածելու ինքնիշխան արժեքների քարոզող եւ վերարտադրող հաղորդակցման համակարգի, որը կարող է նպաստել արժեքային առումով հանրության լայն շրջանակներին ավտորիտար «հեղինակություններից» կախման եւ հնազանդության մեջ պահելուն:

Արժեքային գործընթացներում մեզ հետաքրքրող տեսանկյուններից կարելու է նաեւ բնակչության պահանջմունքների դաշտի եւ իրական, իդեալական արժեքային հարթություններում տեղի ունեցող փոխակերպումների հետազոտությունը:

Չեխոստանի ժամանակաշրջանում Չայաստանի բնակչության պահանջմունքների սահմանագիծը հնարավորին չափ դեպի վար սեղմելու հետեւանքով կտրուկ փոփոխության ենթարկվեցին երեւոյթներն արժեքներու գնահատման չափանիշները: Ինչպես նշվեց վերը, վերջիններս նպաստեցին, որ յուրացման ու շահագործման հատկանիշներն իրական արժեքային հարթությունում հասարակական առումով ստանան խիստ գործառական նշանակություն:

Իրական արժեքների այս դաշտի ստեղծման հնարավորությունը, որքան էլ տարօրինակ է, ստեղծվեց համազգային իդեալական արժեքների հասարակայնորեն գերազնահատման արդյունքում:

Հասարակության մեջ ձեւավորված չեն իրական արժեքների գնահատման այնպիսի չափանիշներ, որոնք թույլ կտան գնահատել իշխանությունների գործունեության օգտակարությունը հասարակական բարօրության ուղղվածության տեսանկյունից: Ուստի, 1988-1991թթ. ազգային ազատագրական

պայքարի առաջնորդների նկատմամբ իդեալական արժեքային մակարդակում կույր հավատը՝ մի կողմից եւ՝ հապշտապ որոշումներ եւ արագ ադապտացիա պահանջող ճգնաժամային պայմանների ստեղծման միջոցով պահանջմունքների որական եւ քանակական առումների կտրուկ անկումը մյուս կողմից հանգեցրեցին արժեքների գնահատման չափանիշների որակական փոփոխությունների:

Չնայած արդեն տրվել է իրական եւ իդեալական արժեքների մեր բնորոշումը, սակայն հետագա ասելիքը պահանջում է մի փոքր ավելի ընդլայնել արդեն տրված բնորոշումները:

Իրական արժեքներն այն արժեքներն են, որոնք պայմանավորում են հասարակական համագործակցության տիպը եւ կիրառական տեսանկյունները: Դրանց միջոցով կազմակերպվում եւ ձեւավորվում է հասարակական հեղինակավոր դերերի սանդղակը եւ դրանում սոցիալական շարժունության հնարավորությունները:

Իդեալական գործառնական արժեքներն այն արժեքներն են, որոնք, չնայած իրական համագործակցության հարթության վրա չունեն գործառնություն, սակայն ազգային-հասարակական գաղափարախոսական դաշտում ունեն հանրությանը գաղափարական առանցքի շուրջ համախմբող գործառնություն (ազգ, հայրենիք, մարդավայել կենսակերպ, սոցիալական արդարություն, պատմական հողեր, ազգային տոներ եւ այլն): Դրանք առավելապես հասարակական ենթագիտակցական մակարդակում գործառնող արժեքներն են:

Իդեալական պահուստային արժեքները նրանք են, որոնք, չնայած չունեն հանրույթը համախմբող գործառնություն ոչ՝ իրական եւ ոչ՝ իդեալական հարթության վրա, շարունակում են որպես արժեք մշվել իդեալական հարթության վրա (բարություն, ազնվություն, գիտություն, ուսուցիչ, եւ այլն): Արժեքային նման տարբերակումը հիմնված է արժեքի, որպես սոցիալական փաստի, հանրային կառույցում իրականացնող գործառնության վրա:

Այսպես, վերը նշված պահանջմունքների դաշտի կտրուկ փոփոխությունների հետեւանքով իրական մի շարք արժեքներ միանգամից մղվեցին իդեալական արժեքների պահուստային ֆոնդ: Դրանք մեծամասամբ վերաբերում էին խորհրդային հասարակական-տնտեսական եւ մշակութային համակարգի պայմաններում գործառնական մի շարք արժեքների եւ դերերի: Մի շարք իդեալական գործառնության արժեքներ, որոնք միշտ բնորոշ են եղել հայ հասարակությանը, պահպանեցին իրենց գործառնությունը: Դրանք հատկապես համազգային համերաշխությանը եւ համագործակցությանը վերաբերող արժեքներն են, որոնք ժամանակ առ ժամանակ ,ստանալով ակտիվ ֆունկցիոնալ դեր, ձեռք են բերում իրական արժեքի նշանակություն: Այդպես եղավ 1988թ. երբ

իդեալական արժեքները, առանց սոցիալ-տնտեսական համագործակցային հիմքի տեղափոխվելով իրական գործառնության հարթություն, իռացիոնալ բնույթ հաղորդեցին ազգային-ազատագրական պայքարին, որն այսօրվա իրողության վկայությամբ գտնվում է առայժմ ճգնաժամային փուլում:

Իրական արժեքային հարթությունը վերջին տարիներին որակական առումով ամենից խիստ տուժեց, քանի որ սա այն հարթությունն է, որը սպասարկում է հասարակական համագործակցության կառույցը: Այս իմաստով հատկապես նշանակալից դեր խաղաց հասարակության պահանջները սահմանազօհ կտրուկ իջեցումը: Որակական աստիճանով պայմանավորված, յուրաքանչյուր պահանջումնքի բավարարում պահանջում է որոշակի գործունեություն եւ դրան բնորոշ արժեքային միջավայրի ստեղծում: Իրական արժեքները գլխավորապես սպասարկում են հասարակության սոցիալական համագործակցության գոյատեւման մեխանիկական խմբերի պահանջները, որոնք գլխավորապես սահմանափակվում են ֆիզիկական եւ կենցաղային նվազագույն պահանջները շրջանակներով: Փոփոխվեց նաեւ բարոյական եւ հումանիտար արժեքների բնույթը, որոնք, հարմարվելով գոյատեւման մեխանիկական համագործակցության ձեւերին, ինչպես ցույց տրվեց, դեգրադացվեցին հասարակականից՝ խմբային: Վերջինս իրական արժեքների դաշտից իդեալական արժեքների դաշտ տեղափոխեց բարձր պահանջները համապատասխան հասարակական եւ համաէթնիկ հարթության արժեքները: Այդ պատճառով էթնիկ-հասարակական հարթության այնպիսի կարեւոր արժեքներ, ինչպիսին օրենքն է, մշակույթը, գիտությունը, կրթությունը, համընդհանուր պարտքի եւ պատասխանատվության զգացումը, պետական կամ ազգային եւ հասարակական շահը՝ անհատական եւ խմբային ուժի, նյութական հարստության, դրամական կարողության, ընտանիքի բարօրության, «օրվա հացի» եւ նմանատիպ այլ արժեքների մրցակցության մեջ կորցրին իրենց կիրառականությունը եւ արժեքային կշիռը իրական հարթությունից տեղափոխվելով իդեալական գործառնության կամ պահուստային հարթության: Այն, որ հայաստանյան հասարակության իդեալական գործառնության եւ պահուստային հարթությունները բավականին հարուստ են, վկայում են ոչ միայն մեր դիտարկումներ, այլև միջազգային տարբեր կազմակերպությունների զեկույցները: Հայ հասարակությունը չափազանց բարձր է գնահատում գիտության եւ կրթության, մշակութային ժառանգության եւ պատմության, աշխատանքի մասնագիտական բաժանման եւ արտադրական տնտեսության, սոցիալական արդարության, ընկերավարական եւ ժողովրդավարական ու այս հարթության այլ արժեքների դերը, որը պայմանավորված է խիստ կարեւոր մի հանգամանքով՝ հայաստանյան հասարակությունը ոչ վաղ անցյալում

եւ իր պատմական անցած ուղում կարեւորել եւ իրական արժեքների թվին է դասել վերը նշված հասարակական եւ էթնիկ նշանակության արժեքների հիմնական մասը: Ուստի իրական արժեքների վերջին տարիներին որակական եւ քանակական կտրուկ անկումը հասարակության նշված որակները կենտրոնացրել է իդեալական արժեքների հարթությունում, որն էլ հանդիսանում է այդ արժեքների վերարտադրման տնտեսական հիմքի ստեղծման դեպքում հասարակության պատրաստակամության եւ ձգտման պատճառը: Դա է նաեւ այն հիմնական պատճառը, որ այսօր հայաստանյան հասարակության գաղափարական միավորման համար հիմնավոր եւ լայն դաշտ ունեն սոցիալական արդարության եւ ազգային համերաշխության գաղափարները: Հետաքրքիր է այս առումով գնահատել ազգային էլիտայի գոյության իրողությունը: Իրական արժեքները, որոնք վերաբերում են ֆիզիկական պահանջները բավարարելու եւ դրանք սպասարկող հումանիտար մշակութային «նոր» արժեքների ոլորտին, գտնվում են այսպես կոչված «պուլզատիների» կամ հարուստների շերտի վերահսկողության ներքո: Իսկ իդեալական արժեքները, հատկապես գործառնությանը, գտնվում են վերջին տարիներին սեփականության վերարտադրության հնարավորությունները կորցրած կամ մասամբ պահպանած մտավորականության, ինչպես նաեւ ունեցվածքային առումով իրական միջին շերտը ներկայացնող մտավորականների փոքրաթիվ խավի վերահսկողության ներքո: Իրական էլիտայի դեր այսօր կարելի է հատկացնել, ըստ էության, միջին եւ միջինից բարձր կարողություն ունեցող, Հայաստանում խիստ փոքր տոկոս կազմող մտավորականներին: Իսկ այսօրվա իրական արժեքային դաշտը վերահսկող էլիտային էթնիկ-հասարակական տեսանկյունից կարելի է համարել անկարողունակ եւ պսեւդոէլիտա: Իդեալական արժեքների վերահսկողությունն իրականացնող սեփականության դիմամիկ վերարտադրության կարողությունը կորցրած մտավորականությունը նույնպես չունի հնարավորություններ սեփականատիրական կարողություն նշված արժեքներն իրական հարթություն տեղափոխելու համար եւ, ըստ էության, նույնպես էլիտայի գործառնույթ չի կատարում:

Այսպիսով, կարելի է ասել, որ իրական եւ իդեալական արժեքների վերը նկարագրված պատկերը եւ դրանց նկատմամբ գոյություն ունեցող հասարակական վերահսկողության մեխանիզմների երկատվածությունը հանգեցրել է իրական էլիտայի բացակայության իրողությանը կամ այն աստիճան խիստ փոքրաթիվությունը, որը թույլ չի տալիս էթնիկ-հասարակական կարեւորության արժեքներն իդեալականից տեղափոխել իրական հարթություն:

2. Մշակույթի դերը հոգեւոր ընդհանրականության ձեւավորման գործում

Մշակույթն ընդգրկում է էթնիկ հանրույթի հաղորդակցման ողջ համալիրը եւ նրա յուրահատկությունը պայմանավորում է նաեւ էթնիկ հանրույթի յուրահատկությունն ու ինքնությունը: Ինքնին մշակութային ինքնության պահպանման խնդիրն ազգային անվտանգության առանձին հիմնահարց է: Սակայն, քանի որ մշակույթը սերտորեն առնչվում է նաեւ հանրույթի հոգեւոր-արժեքային ընդհանրության ձեւավորմանը, ապա այն մեր հետազոտության մեջ ստանում է առանցքային կարեւորություն:

Մշակույթի դերի քննարկմանը նվիրված այս բաժնում նկատի է առնվում ոչ միայն պրոֆեսիոնալ մշակութային ոլորտը, այլև էթնիկ հանրույթի հաղորդակցումը եւ համախմբումը կազմակերպող ողջ համալիրը:

Մշակույթը՝ մասնավորապէս սոցիոնորմատիվ⁸ եւ հոգեւոր մշակույթները, հանդիսանում են հանրույթի հոգեւոր ընդհանրականության եւ համընդհանուր բարոյականության ձեւավորման առաջնային գործոնները: Նշենք, որ մշակույթ հասկացությունն այս աշխատանքում դիտվում է որպէս մարդկային երեք տեսակի՝ հիմնարար, ածանցյալ եւ ինտեգրատիվ պահանջմունքները բավարարող համալիր⁹: Մշակույթի զարգացման աստիճանը կարելի է որոշել տվյալ հանրույթի պահանջմունքների բազմազանության եւ այդ պահանջմունքները բավարարելու մեխանիզմների քանակական եւ որակական հատկանիշներով: Հիմնարար պահանջմունք ասելով, նկատի ունենք մարդկանց հիմնականում կենսապահովման առաջնային պահանջմունքները, որոնք վերաբերում են սննդի, ջեռուցման, բնակարանային, հագուստի եւ մարդու կենսագործունեության համար առաջնային նշանակություն ունեցող այլ պահանջմունքներին: Ածանցյալ պահանջմունքները հիմնականում բխում են ներկայացված հիմնարար պահանջմունքներից եւ վերաբերում են հիմնականում կենցաղային հարմարավետությանը, կահույթին, բնակարանի ինտերյերին ու էքստերյերին, տնտեսական հմտություններին, ձեւերին, գործիքներին եւ կառույցներին, հանգստի ու ժամանցի միջոցներին ու ձեւերին, ինչպէս նաեւ նյութական մշակույթի մնացած տարրերին:

Ինտեգրատիվ պահանջմունքների տակ նկատի ունենք առաջին հերթին հանրության անդամների եւ տարբեր մասերի միջեւ հաղորդակցման եւ փոխանակային հարաբերությունների կազմակերպման միջոցներն ու ձեւերը՝

⁸ Տերմինը փոխառված է: Культура жизнеобеспечения и этнос, Ереван, 1983.

⁹ . Лурье С., Историческая этнология, М., 1998, с 18.

հանրության ինքնակազմակերպումն իրականացնող ինստիտուտները, հանրային ինքնագիտակցությունը պայմանավորող արժեքային համալիրը, ինֆուկապերի շրջանառության մեխանիզմները, ինչպէս նաեւ հոգեւոր մշակույթն ամբողջությամբ:

Որպեսզի հասկանանք, թե ի՞նչ դեր է կատարում էթնիկ մշակույթը հայ էթնոսի հոգեւոր ընդհանրականության ձեւավորման գործում, հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել հայերի էթնիկ ինքնությունը պայմանավորող հիմնական տարածամասնակյա եւ համաժամանակյա ինֆուկապերի ինստենսիվության ու շրջանառության մեխանիզմներին, պատմական հիշողության գործոնին և հաղորդակցման /խոսքային եւ նշանային/ տարրերին:

Հայտնի է ընդունված փաստ է, որ մշակույթը կազմված է ավանդույթային եւ նորույթային շերտերից: Ավանդույթի պահպանման եւ վերարտադրության հիմնական միջավայրը եղել է հայկական գյուղը: Քաղաքը սովորաբար ձեւավորել կամ ներմուծել է նորույթները եւ համաժամանակյա-հորիզոնական ինֆուկապերի միջոցով դրանք տարածել գյուղական ու գավառային միջավայրեր: Հայկական մշակույթը, ներառյալ 20-րդ դարի առաջին կեսը, եթե հաշվի չառնենք խորհրդային վարչակազմի կողմից պարտադրված որոշ նորանուծությունները, հիմնականում եղել է գյուղական եւ ավանդույթային: 20-րդ դարի երկրորդ կեսին, հատկապէս 1960-ական թվականներից սկսած, այն կտրուկ փոխակերպման ենթարկվելով՝ վերածվեց քաղաքային մշակույթի, որում ավանդույթի դերակատարությունը զգալիորեն նվազելով, տեղը զիջեց նորույթայինին: Ավանդույթային առանձին տարրեր քաղաքային մշակույթում պահպանվել են տոնածիսական կյանքում, ընտանեկան կենցաղում, սեռատարիքային խմբերի փոխհարաբերությունները եւ ամուսնական հարաբերությունները կազմակերպող մեխանիզմներում:

Ինչ վերաբերում է ավանդույթի փոխանցման եւ վերարտադրության մեխանիզմներին, ապա դրանք հայկական մշակույթում սովորաբար իրականացվել են սերնդից սերունդ ավանդույթը փոխանցելու միջոցով: Ավանդույթի փոխանցումը հիմնականում իրականացվել է էթնիկ մշակույթին հատուկ խոսքային եւ ոչ խոսքային նշանային միջոցների կիրառման միջոցով: Հարկ է նկատել, որ ավանդույթի փոխանցման այս մեխանիզմով է պայմանավորված եղել նաեւ տարիքային բարձր սերնդի հատուկ կարգավիճակը հայկական մշակութային միջավայրում: Աստիճանաբար, ավանդույթի դերի անկմանը զուգահեռ, անկում են ապրում նաեւ տարիքային բարձր շերտերի նկատմամբ կարգավիճակային մոտեցումները: Մեր ազգագրական դիտարկումների համաձայն, արդեն 1992-1993 թվականներին նույնիսկ գյուղական միջավայրերում տարիքային բարձր խմբերի կարգավիճակային դերը զգալի անկում էր

ապրում եւ ավելի բարձրանում էր երիտասարդության ինքնուրույնությունը: Չատկապես տղամարդկանց երիտասարդ խմբերում շատ դեպքերում ժպիտով էին վերաբերվում տարիքով մեծերի խորհուրդներին եւ խրատներին, որոնք այդ ձեռով փորձում էին պահպանել իրենց կարգավիճակը համայնական դերային սանդղակում: Նկատենք սակայն, որ ի տարբերություն հասարակական միջավայրի, նեղ ընտանեկան շփումներում դեռեւս բարձր է տարիքով բարձր մարդու կարգավիճակը:

Ինչ վերաբերում է ավանդույթների բնույթին, ապա կարելի է ասել, որ դրանք հիմնականում կարգավորել են համակեցությունն ընտանիքի, ազգակցական, դրացիական խմբերում եւ համայնքային միջավայրերում: Հարկ է նկատել, որ ավանդական հայ հասարակության մեջ, հասարակական ամենից մեծ միավորը եղել է համայնքը, որը, ինչպես նշվեց, գլխավորապես եղել է խմբային համագործակցության կառույց: Այսինքն, համայնականների փոխհարաբերությունների եւ համակեցության կազմակերպումն իրականացվել է սոցիալական նորմերի, այլ ոչ օրենքների միջոցով: Ազգագրական նյութերը թույլ են տալիս վստահորեն պնդելու, որ հայ իրականության մեջ ամենից լայն հասարակական միավորը՝ համայնքը, գործել է «չգրված օրենքների» հիման վրա եւ իր բնույթով եղել է «փակ» խմբային ու հիմնականում դոգմատիկ բնույթի համակարգ:

Նկատենք, որ ընտանեկան, ազգակցական, դրացիական եւ համայնական կառույցները, հանրային համագործակցության այն օղակներից են, որոնց վերաբերող ավանդույթներից առանձին տարրեր այսօր դեռեւս պահպանվում են ոչ միայն մեր գյուղական մշակույթում, այլև քաղաքային մշակույթին թույլ ադապտացված քաղաքաբնակների միջավայրում:

Բնականաբար, թե՛ խորհրդային շրջանում եւ թե՛, մասնավորապես, արտաքին աշխարհի հետ աշխույժ շփումների մեր ժամանակաշրջանում, համաժամանակյա-հորիզոնական ինֆոկապերի ինտենսիվության եւ ձեւերի բազմազանության աճը, որոշակիորեն իր ազդեցություն է թողնում ավանդույթների վերարտադրության մեխանիզմի վրա: Տարածամասկյա-ուղղահայաց մշակույթային ինֆորմացիայի /ավանդույթի/ սերնդից սերունդ փոխանցմանը զուգահեռ, մեր օրերում գյուղական ընտանիք մտած հեռուստատեսությունը երիտասարդ սերնդի համար, ավանդույթային տեղեկատվությանը համատեղ, նորույթային տեղեկատվության մեծ հոսքեր է ապահովում: Նշվածը որոշակիորեն փոխակերպումների է ենթարկում մշակույթի ավանդույթային այն շերտերը, որոնք վերաբերում էին հիմնականում հանրույթի խմբային բնույթի համակեցությանը եւ հարաբերություններին:

Կարելի է ասել, որ մեր մշակույթի ավանդույթային շերտի ինֆորմացիան,

որը վերաբերում է հատկապես սոցիոնորմատիվ մշակույթային հարթությանը, չի պարունակում համապետական ընդգրկման ավանդույթներ, իսկ համագայինը հիմնականում արտահայտվում է սոցիոնորմատիվ մշակույթի տեղական առանձնահատկություններով:

Այս առումով մեր մշակույթային քաղաքականության առաջնային կարեւորության խնդիր պետք է համարել համապետական, համագային ավանդույթների ձեւավորումը եւ մշակույթի ավանդույթային շերտում դրանց հիմնավորումը: Դրա համար, որպես միջոց, կարելի է օգտագործել հեռուստատեսությունը եւ մնացած ՁԼՄ-ները: Համապետական եւ համագային ավանդույթների ձեւավորումը եւ դրանում ՁԼՄ-ների օգտագործումը մի կողմից՝ կհավասարակշռի մշակույթի ավանդույթային այն դրսեւորումները, որոնք վերաբերում են խմբային /ընտանիք, ազգակցական, դրացիական շրջանակներ/ համագործակցության ոլորտին, մյուս կողմից՝ կնպաստի նրան որ էթնիկ հանրույթի հոգեւոր հիմքերը ձեւավորող առանցքը հանրային կառույցի այլ օղակներից կտեղափոխվի ամենից հիմնարար եւ ընդգրկուն հաստատություն՝ պետության հարթություն: Նշվածն իր հերթին դրական նշանակություն կարող է հաղորդել անհատի վարքին՝ հաղորդելով դրան ոչ միայն ընտանեկան, ազգակցական, դրացիական, այլև պետական եւ ազգային նպատակաուղղվածություն: Ավելի պարզ ասած, կնպաստի Հայաստանի յուրաքանչյուր բնակչի մեջ հայրենասիրական ոգու ձեւավորմանը եւ արմատավորմանը:

Հայոց էթնիկ ինքնագիտակցության եւ հոգեւոր համախմբվածության գործում առանցքային դերակատարության տարրերից է պատմական հիշողության գործոնը: Կարելի է ասել, որ հայերի պատմական հիշողությունը հասարակական լայն ընդգրկման տեսանկյունից դիտարկելու դեպքում հենված է խիստ որոշակի դեպքերի եւ պատմական դեմքերի հիշատակման եւ կարեւորման վրա: Վերջին տարիներին դաշտային հետազոտությունները ցույց են տալիս, որ, չնայած հազարամյակների խորքը գնացող պատմական անցյալին եւ ժառանգականությանը, մեր պատմական հիշողության մեջ կարեւորվող իրադարձությունների ու պատմական դեմքերի մեջ ժամանակագրական առումով գերիշխող դիրք են ստացել Հայոց ցեղասպանության եւ ֆիդայական շարժմանն առնչվող իրադարձություններն ու դեմքերը¹⁰:

Հազարամյակների պատմություն ունեցող ժողովրդի պատմական հիշողության կենտրոնացվածությունը նախորդ դարի վերջին եւ 20-րդ դարասկզբին տեղի ունեցած ողբերգական իրադարձության վրա, կարող է գցել պատմական հիշողության դերը էթնիկ հանրության համախմբման գործում:

¹⁰ . ԴԱՆ:

Անշուշտ, էթնոսի պատմության մեջ եւ այն էլ ոչ վաղ անցյալում տեղի ունեցած խոշոր ողբերգական ցնցումը բնական է, որ պետք է խոր հետք թողած լինի պատմական հիշողության վրա: Առավել եւս, եթե նկատի ունենանք, որ դեռեւս կենդանի է ցեղասպանություն ապրած սերունդը կամ նրանց ժառանգները: Սակայն պետականություն ձեռք բերած ժողովրդի համար չափազանց կարեւոր է նրա պատմության փառավոր էջերի, հատկապես պետականության հաստատման եւ ուժեղացման հետ կապված իրադարձությունների եւ պետական այրերի մասին պատմական հիշողության ակտիվացումը: Դա հատկապես կարեւոր դեր կարող է խաղալ պետականությունը, որպես արժեք, էթնոսի հոգեւոր համախմբվածության առանցքի վերածելու տեսանկյունից: Պատմական հիշողության մեջ պետականության եւ դրանում դերակատար պատմական դեմքերի արժեքային ակտիվացումը կարեւոր խթան կարող է հանդիսանալ ներկայիս անկախ պետականությանը հանրային գիտակցության մեջ հոգեւոր արժեքի գործառույթ հաղորդելուն:

Հարկ է նշել, որ ոչ այնքան անհրաժեշտ է շեշտադրել օտար զավթիչների դեմ դիմադրության եւ ազգափրկիչ բովանդակության իրադարձությունները, այլ հենց պետականության հաստատման կամ վերականգման եւ նրա հզորացման բովանդակության իրադարձություններն ու դեմքերը /Հայաստանի հզորացումը Արտաշեսյանների օրոք, պետականության գոյությունը Արշակունիների, Բագրատունիների օրոք 1-ին և 3 -րդ հանրապետությունների ձեւավորումը/:

Նկատենք նաեւ, որ նշվածը ոչ միայն հայաստանյան, այլ եւ համահայկական երեւոյթ է: Այսինքն, պատմական հիշողության վերը ներկայացվող սկզբունքների կիրառման առաջարկները հավասարապես վերաբերում են նաեւ սփյուռքահայությանը:

Հայ ժողովրդի մշակութային առանձնահատկություններից մեկն այն է, որ ժողովուրդն ինքն իրեն համարում է մշակութային ժողովուրդ՝ շնորհիվ իր հարուստ մշակութային ժառանգության: Սակայն այս գործոնը վերջին տարիներին, կարծեք թե, մի տեսակ անտեսվել է եւ այն արժեքները, որոնք ժամանակին հանդիսանում էին մեր ժողովրդի հպարտությունը եւ մշակութային առանցքի շուրջ հոգեւոր համախմբվածության խթան էին ծառայում, այսօր իրենց այդ դերը շատ թույլ են իրականացնում: Այս հարցում, անշուշտ, պետության կողմից տարվող քաղաքականությունը նույնպես իր դերը խաղում է: Խոսքը նրա մասին է, որ մեր պատմական հուշարձանների նկատմամբ պետական հոգածությունը բավականին թույլ է եւ, եթե նախկինում, շնորհիվ հայ հնագիտության խթանման, բացահայտվում, վերանորոգվում եւ պետական խնամառության տակ էին առնվում մեր հուշարձանները, ապա ներկայումս

դրանց որոշ մասը գրեթե անտարբերության է մատնված, իսկ մյուսներում էլ աշխատանքները տարվում են այդ ոլորտի մասնագետների անձնական նվիրվածության շնորհիվ: Այսինքն, այսօր Հայաստանում պատմական ժառանգության նկատմամբ սկզբունքային պետական քաղաքականության անբավարար մակարդակը հանգեցրել է նրան, որ պատմական ժառանգությունը, որպես մշակութային համախմբիչ գործոն, կորցնում է իր դերակատարությունը ազգային հոգեւոր միջավայրի ձեւավորման գործում:

Հարկ է նշել, որ մեր կատարած հետազոտությունների համաձայն վերջին տարիներին անհամեմատ նվազել է նաեւ պատմության եւ պատմավեպերի նկատմամբ հետաքրքրությունը: Ընդհանրապես, ազգային ակունքների, անցած ուղու վերաբերյալ հետաքրքրությունը եւ դրա արժեքային դերը հայ հասարակության մեջ, մարդկանց կարծիքով, խիստ նվազել է: Դա հատկապես նկատելի է երիտասարդների շրջանում, որոնք ավելի մեծ կարեւորություն են տալիս Հայաստանի ներկայիս ճգնաժամային իրավիճակի հաղթահարմանը, քան պատմական հերոսական անցյալով հպարտանալուն: Հարկ է նշել, որ վերջին տարիներին հատկապես երիտասարդության շրջանում թուլացել է նաեւ պատմական հուշարձանների նկատմամբ հետաքրքրությունը եւ տեղեկացվածության աստիճանը¹¹:

Ըստ դաշտային մյուսերի, տիրապետող է այն կարծիքը, որ ազգային պատմության եւ մշակույթի նկատմամբ հետաքրքրվածությունը վերելք կապրի այն ժամանակ, երբ մարդիկ կտեսնեն, որ ազգային շահը պետության մեջ ավելի բարձր է դասվում, քան ազգի առջեւ պատասխանատվություն ստանողի անձնական շահը: Նկատենք, որ սա այն մտածողության ձեւն է, որն ազգային շահի գնահատականում կարեւորում է պետականության առանցքային չափանիշը՝ ընդհանուրի առջեւ պատասխանատվություն ստանձնողի համապատասխանությունը իր զբաղեցրած դիրքին եւ տեղին:

Պատմական հիշողության եւ ժառանգության գործոնը հայաստանաբնակ հայերի մտածողության մեջ ամուր կապվածություն ունի հայրենիքի գաղափարի հետ: Հետաքրքիր է, որ հատկապես միջին եւ բարձր տարիքային խմբերում գերիշխող է նրանց կարծիքը, ովքեր հայրենիք ասելով հասկանում են ոչ միայն Հայաստանի Հանրապետությունը եւ Արցախը, այլեւ պատմական Հայաստանը: Սակայն կարեւոր է մեկ այլ նրբերանգի առկայությունը, համաձայն որի ժողովրդի մեծ մասը տարբերակում է նաեւ հայրենիք եւ պատմական հայրենիք հասկացությունները, համաձայն, իրական հայրենիքը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ պատմականը՝ Արեւմտահայաստանը եւ

¹¹ . ԴԱՆ:

Պարսկահայաստանը: Դրան համապատասխան էլ, շատերի կարծիքով, առկա ազգային պետությունը պետք է համարվի իրական արժեք, իսկ պատմական Հայաստանը՝ պատմական¹²: Ինչ վերաբերում է սրանց դերակատարության հոգեւոր-գաղափարախոսական հարթությանը, ապա թե՛ իրական, թե՛ պատմական հայրենիքի ընկալումներն ունեն իրենց մշակութային դրսեւորումները: Սակայն, եթե զնահատելու լինենք նման մշակութային երեւոյթների արտահայտվածությունը ներկայիս հայաստանյան հասարակության մշակութային կյանքում, ապա այն չափազանց թույլ է եւ, փաստորեն, կարելի է ասել, որ արդի մշակույթը հանրային վարքում ունի անբավարար դերակատարություն հայրենասիրության եւ պետականամետության ձեւավորման գործում: Այս հատկանիշը հատկապես կարեւոր գործառույթ կարող է ստանալ հոգեւոր եւ հումանիտար մշակույթում, ինչպես նաեւ պրոֆեսիոնալ մշակույթում:

Մշակութային ոլորտի մեր դիտարկումներից բխող եզրակացություններից է նաեւ այն, որ վերջին տարիներին պրոֆեսիոնալ եւ ժողովրդական մշակույթների միջեւ նկատվում է որոշակի տարանջատում: Մեր պրոֆեսիոնալ մշակութային ստեղծագործություններում հիմնականում տիրապետում է նորանուծությունը, փորձ է արվում ընդօրինակել կամ՝ ռուսական եւ կամ՝ արեւմտյան համապատասխան դրսեւորումները, ինչը միտում ունի հայկական պրոֆեսիոնալ մշակույթին ընդօրինակություններով հագեցած բնույթ հաղորդելու, որը չի բավարարում հայ մարդու հոգեւոր պահանջումները: Թեկուզեւ խորհրդային տարիների փորձից ելնելով, կարելի է ասել, որ մեր պրոֆեսիոնալ մշակույթում՝ պարավեստում, կինոարվեստում, երգարվեստում, նկարչության մեջ եւ այլ ոլորտներում լավագույն ստեղծագործությունները, որոնք նաեւ վայելում են լայն ժողովրդականություն, արմատներով կապված են ժողովրդական մշակույթին: Ներկայիս պրոֆեսիոնալ մշակույթի «մոդեռնիզացիան», եթե այն նույնիսկ փորձ է արվում ազգային երանգներով ներկայացնել, ավելի շատ տանում ազգայինի այլասերման, քան դրա մշակութային հղկվածության: Դա նկատելի է վերջին տարիներին պրոֆեսիոնալ մշակույթի համարյա բոլոր ոլորտներում: Անշուշտ, չի կարելի ասել, որ բարձրաժեք գործեր չեն ստեղծվում: Դրանք, իհարկե, այսօր նույնպես ստեղծվում են, եւ մեկ անգամ եւս ապացուցվում է այն ճշմարտությունը, որ դարերով հղկված ժողովրդական մշակութային ժառանգության հիմքի վրա մշակված պրոֆեսիոնալ մշակութային փաստերն են առավել բարձրարժեքը: Նկատենք նաեւ, որ ցածրարժեք մշակութային փաստերն ունեն խմբակային ճաշակ բավա-

¹² ՂԱՆ:

րարելու միտվածություն եւ որեւէ դրական դեր չեն խաղում ազգի հոգեւոր ընդհանրականության գիտակցության ձեւավորման գործում: Միայն բարձրաժեք մշակութային ստեղծագործությունները կարող են ընդունելի դառնալ հանրության տարբեր շերտերում եւ միավորել նրանց հոգեւոր մեկ առանցքի շուրջ:

Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառները մի քանիսն են: Նախ, մշակութային ոլորտում սկսում են թելադրող դիրք ստանալ այնպիսի անհատներն ու խմբերը, որոնք կամ՝ ինքնուսներն են կամ՝ չունեն համապատասխան մասնագիտական որակավորված կրթություն: Խոսք այն մասին չէ, անշուշտ, որ ինքնուսությունը պետք է մերժվի ընդհանրապես, սակայն երբ պրոֆեսիոնալ մշակույթում նրանք ստանում են գերակա եւ թելադրող դիրք, ապա առաջանում է պրոֆեսիոնալ մշակույթի որակական անկման վտանգ: Իրավիճակ, որում հայտնվելու առջեւ է կանգնած նաեւ Հայաստանի պրոֆեսիոնալ մշակույթը:

Այս առումով պետությունը նույնպես կարող է լուրջ դերակատարություն վերցնել իր վրա եւ, որպես մշակութային միտումներ ձեւավորող, պետական քաղաքականության մեջ պատվերների համակարգի ձեւավորման միջոցով նպաստել մշակութային բարձրարժեք ստեղծագործությունների ձեւավորմանը:

Այսօր վերականգնել է պետք պրոֆեսիոնալ մշակույթի ամենակարեւոր հատկանիշներից հետեւյալները՝

- արմատներով ժողովրդական մշակույթին կապվածությունը,
- իր մեջ ժողովրդական մշակույթի բյուրեղացումը,
- մշակութային բարձրարժեք տարրերի քարոզումը եւ դրանով իսկ մշակութային ընդհանրական-ազգային ճաշակի ձեւավորումը հանրության լայն զանգվածներում:

Նկատենք, որ Հայաստանում ձեւավորվող ոչ պրոֆեսիոնալ մշակույթի ամենից բացասական ազդեցությունն այն է, որ՝

- նպաստում է հասարակության մեջ հատվածայնության ուժեղացմանը,
- գերակայությունը տալիս՝ է ոչ թե ողջ հանրության, այլ կեղծ էլիտաների պահանջումներին եւ ճաշակին,
- ձեւավորում է մշակութային անդեմություն,
- հայկական մշակույթը համամարդկային մշակույթի առումով վեր է ածում անդեմ գավառային պատճենահանումների հավաքածուի,
- նպաստում է հասարակության մեջ ավտորիտար բարոյականության քարոզչությանը,
- թուլացնում է հասարակության մեջ հոգեւոր ընդհանրական դաշտի ձեւա-

վորման մշակույթի գործառնությունը:

Մշակույթի գործառնության հատկանիշները պայմանավորող մեխանիզմներն, ինչպես նշվեց, համաժամանակյա-հորիզոնական եւ տարածամասնակյա-ուղղահայաց ինֆոկապերն են¹³: Առաջինն ապահովում է ժամանակային նույն հարթության վրա էքնոսի տարբեր միավորների /սկսած մարդուց մինչեւ էքնիկ լոկալ խմբեր/ միջեւ հաղորդակցումը, մշակութային տեղեկատվության շրջանառությունը եւ համակեցությունը: Երկրորդն /դիախորոն/ ապահովում է սերնդից սերունդ, այդ թվում նաեւ պատմական կտրվածքով, մշակութային տեղեկատվության փոխանցումն ու վերարտադրությունը: Այս առումով մշակութային ոլորտում հոգեւոր անվտանգության հիմնախնդիրն ինֆոկապերի նկատմամբ ազգային եւ պետական վերահսկողության պահպանումն է: Եթե օտար մշակույթներին հաջողվի սողոսկել մշակութային տեղեկատվության շրջանառության եւ վերարտադրության ոլորտ, ապա նրանք կարող են իրենց ձեռքը վերցնել նաեւ հոգեւոր ու բարոյական արժեքների քարոզչությունը, ինչը, բնականաբար, խիստ անցանկալի երեւոյթ է: Պատահական չէ, որ արեւմտյան արժեքներին արմատականորեն հակադրվող իսլամական մի շարք երկրներ հատկապես հիվանդագին վերաբերմունք ունեն ՁԼՄ-ների եւ էլեկտրոնային լրատվամիջոցների նկատմամբ:

Այսինքն, հոգեւոր անվտանգության տեսանկյունից մշակութային կյանքում առանձնահատուկ կարեւորություն ունի ինֆոկապերի շրջանառության կանոնակարգման նկատմամբ պետական քաղաքականության որդեգրումը: Նկատենք նաեւ, որ նշվածը, որպես անվտանգության խնդիր, առաջնային տեղ է գրավում աշխարհում ժողովրդավարական արժեքներ ջատագող երկրներում /մասնավորապես ԱՄՆ-ում/, որտեղ անկախ ՁԼՄ-ները վերահսկվում են պետական հատուկ ծառայությունների կողմից:

Հոգեւոր անվտանգության տեսանկյունից մշակույթի դերի քննարկումն ունի եւս երկու կարեւոր բաղադրիչ: Խոսքը վերաբերում է ազգային լեզվին եւ խորհրդանշային յուրօրինակ համակարգն իր մեջ ամփոփող տոնածիսական համակարգին:

Էքնիկ լեզուն հայկական ինքնությունը պայմանավորող հիմնական մշակութային գործոններից է եւ դա են վկայում նաեւ մեր փորձագիտական հարցումների տվյալները, որոնց համաձայն, Հայաստանի հայերի կարծիքով հայերենը մայրենի լեզու համարողների թիվը կազմում է 100 %¹⁴: Առաջին հայացքից մեզ համար բնական թվացող այս երեւոյթն այդքան էլ հատկանշա-

կան չէ այլ ազգությունների համար: Համեմատության համար նշենք, որ հենց Հայաստանում բնակվող մի շարք ազգային փոքրամասնությունների մեջ 5-6-ից մինչեւ 10 տոկոսի է հասնում այն մարդկանց թիվը, որոնք իրենց ազգային լեզուն մայրենի չեն համարում: Նրանց հիմնական մասը մայրենի լեզու է համարում ռուսերենը, իսկ մի մասը՝ հայերենը: Այսինքն, կարելի է ասել, որ լեզուն որպես էքնոմշակութային ինքնությունը ձեւավորող գործոն, առանցքային կարեւորության դեր է խաղում: Անշուշտ, Հայաստանում բնակչության ոչ մեծ մի հատվածի մոտ ռուսերենի, որպես հաղորդակցական լեզվի, գործածումն ավելի գերակշռող է, սակայն արժեքորման սանդղակում այն ավելի ցածր դիրք ունի, քան հայերենը: Ներկայումս, չնայած օտար լեզուների նկատմամբ ուժեղացել է հակումը, բայց միեւնույն ժամանակ, հենց նույն խավերի մեջ մեծացել է նաեւ հայերեն բանավոր եւ գրավոր լեզուներին ավելի կատարյալ տիրապետելու գիտակցումը: Հարկ է նշել, որ այս գիտակցության բարձրացմանը նպաստել է նաեւ լեզվական ոլորտում որդեգրված պետական քաղաքականությունը, որի առանցքային մշակութային ունեցող քայլը կարելի է համարել ազգային լեզուն պետական հռչակելը: Այսինքն, ազգային լեզվի նկատմամբ ուշադրության աճը ունի ոչ միայն, զուտ գաղափարական, այլեւ կիրառական (պրակտիկ) հիմքեր: Սա առավել քան կարեւոր երեւոյթ է, քանի որ ազգային լեզուն նախ՝ համարվում է մեր ինքնությունը պայմանավորող արժեքային առանցքի հիմնական բաղադրիչը, եւ երկրորդ, որպես արժեք, գնահատվում է արժեքային համալիրի ոչ միայն իդեալական, այլ նաեւ իրական հարթություններում: Արժեքային համալիրի իրական եւ իդեալական հարթություններում ազգային լեզվի կարեւորման փաստը թույլ է տալիս խոսելու նրա շարժնթաց վերարտադրության հնարավորությունների մասին: Դրա ակնառու վկայությունները կարելի է համարել նաեւ հենց այն բազմաթիվ փաստերը, որ վերջին տարիներին նկատվում է անընդհատ բարենորոգումներ լեզվի բնագավառում, հատկապես լեզուն օտարածին բառերից մաքրելու եւ դրանք սեփական լեզվապաշարի հենքի վրա փոխարինելու միջոցով: Ավելին, նկատելի են նաեւ լեզվական նորույթների ստեղծման փաստեր, որոնք, չնայած նախկինում էլ են եղել, սակայն դրանում գերակշռել են օտար փոխառությունները: Իսկ այսօրվա լեզվական գործընթացների կարեւոր հատկանիշը կարելի է համարել այն, որ լեզվական նորույթների ստեղծման գործընթացում գերիշխող է սեփական հիմքի վրա այն նորույթներով լրացնելը: Նշված երեւոյթը այն աստիճան էական բնույթ է ստացել, որ արդեն չի կարելի բնութագրել որպես մասնակի մոտեցումներ, ինչպես մի քանի տարի առաջ էր եւ այսօր այն որոշակիորեն վեր է ածվել ազգային մշակութային վերարտադրության տեսանկյունից դրական միտումի:

¹³ Арутюнов С., Народы и культуры, М., 1989, с. 17-41.

¹⁴ . ԴԱՆ:

Մեկ անգամ եւս կցանկանայինք նշել, որ ազգային ինքնագիտակցության եւ ինքնության պահպանման եւ շարժընթաց վերարտադրության կարեւոր տարր հանդիսացող ազգային լեզվի արժեքուման գործում կարեւոր դեր են խաղացել լեզվական քաղաքականության ոլորտում պետության որդեգրած սկզբունքները: Այս ոլորտում վստահորեն կարելի է ասել, որ պետությունը կատարում է ազգային-հասարակական կառույցի կազմակերպչական բարձրագույն հաստատության իր դերը, քանի որ նպաստում է լեզվական ոլորտում էթնիկ գործընթացների շարժընթացությանը: Դրա հավաստիքներն են կրթական, գիտական, վարչական հիմնարկություններում ազգային լեզվի նկատմամբ օտար լեզուների գերակայության վերացումը, օտար լեզուների նկատմամբ ուշադրության կարեւորումը միայն ազգային լեզվին անհրժեշտ ուշադրություն հատկացնելուն զուգահեռ, հանրապետությունում գրավոր հաղորդակցման ոլորտում ազգային լեզվի գերակայության հաստատումը:

Եզրափակելով լեզվական ոլորտին վերաբերող մեր դիտարկումների ներկայացումը, կցանկանայինք նշել, որ լեզուն այսօր էլ Հայաստանի հայերի մեջ ունի էթնոհամախմբիչ դեր եւ պայմանավորում է հայ ինքնության եւ ինքնագիտակցության վերարտադրության շարժընթացությունը՝ շնորհիվ իր ներքին վերարտադրական շարժընթացության:

Լեզվից ոչ պակաս կարեւոր մի ոլորտ է նաեւ էթնոսի ծիսատոնական կյանքը, որի հարուստ խորհրդանշանային համալիրը հանդիսանում է հանրության հոգեւոր ընդհանրականությունը ձեւավորող ու պայմանավորող հիմնական բաղադրիչներից մեկը: Տոնի, ինչպես եւ լեզվի՝ որպէս մշակութային տարրի, կարեւոր առանձնահատկությունն այն է, որ այն իրականացնում է ինչպէս տարածամանակյա, այնպէս էլ համաժամանակյա հաղորդակցական եւ համախմբման գործառույթ: Այսինքն, տոնածիսական համալիրը թույլ է տալիս հաղորդակցվելու եւ հոգեւոր կապի մեջ մտնելու ինչպէս ազգի պատմական եւ մշակութային անցյալի, այնպէս էլ ներկայի հետ: Տոնի յուրահատկությունը, որը կազմում է նաեւ դրա հոգեւոր հիմքը, առօրյա կյանքից դուրս գտնվելն է եւ անկախ հանրության առօրյա աստիճանակարգվածությունից հանրության բոլոր անդամների հավասարության եւ համերաշխության մթնոլորտի ձեւավորումն է: Այս առումով տոնը հասարակական կյանքի այն եզակի ոլորտներից մեկն է, որում հասարակական աստիճանակարգման, շերտավորման եւ տարբերություններ ձեւավորող այլ երեւոյթները ստորակարգվում են հոգեւոր միասնականությանը եւ համերաշխությանը: Տոնը հանրության բոլոր անդամների համար, անկախ նրանց առօրյա կյանքում ունեցած տարբերություններից, ապահովում է միեւնոյն հանրության անդամ լինելու հոգեւոր ու զգայական ընկալումը: Այս առումով, անկախ մասնագիտությունից, տարի-

քից, սեռից, սոցիալական, քաղաքական, տնտեսական կարգավիճակից, հանրության բոլոր անդամները տոնի ժամանակ ստանում են նույն կարգավիճակը /նույն տոնածիսական հանրության անդամի կարգավիճակ/: Հենց այս նույնականությունը, որի ձեւավորումը հոգեւոր-զգայական առումով ապահովում է տոնը բոլորի մոտ, ձեւավորում է տվյալ էթնոմշակութային հանրության պատկանելության ընդհանրականությունը եւ համերաշխությունը¹⁵: Փաստորեն, կարելի է ասել, որ տոնը կատարում է ազգի հոգեւոր-արժեքային ընդհանրականությունը ձեւավորող ինստիտուտի գործառույթ:

Հայ իրականության մեջ տոնի նշված գործառույթը հիմնականում կատարել են ազգային-եկեղեցական տոները: Պետականության բացակայությունը մեր տոնածիսական համակարգում չի խթանել պետական մշակութային տոների ձեւավորումը: Հայաստանի երկրորդ հանրապետության 70-ամյա շրջանում ավելի առանցքային դերակատարություն ստացան խորհրդային պետության հոգեւոր հիմքերի ձեւավորմանը եւ վերարտադրությանը նպաստող տոները, որոնք այդ շրջանի պետական քաղաքականության արդյունքում մեխանիկական մեթոդներով հայ ժողովրդի տոնածիսական համալիրում նվազագույնի հասցրին ազգային-եկեղեցական տոնակատարությունները: Հայաստանի անկախության վերականգնումից հետո մի կողմից՝ եկեղեցու ջանքերի, մյուս կողմից՝ ժողովրդի մշակութային հիշողության շնորհիվ աստիճանաբար վերականգնվում է ազգային-եկեղեցական տոների հանրային գործառույթը: Հատկապէս ուրախալի է, որ այդ տոնակատարությունների նկատմամբ առավել հետաքրքրված տարիքային խմբերից է երիտասարդությունը: Սակայն, հարկ է նկատել, որ ազգային-եկեղեցական տոնակատարություններից եւ ոչ մեկը չի համարվում տոնական օր: Այսինքն, ժողովրդը այդ տոների եւ պետականության միջեւ որեւէ կապ չի նկատում եւ, ըստ էության, այդ տոներին մասնակցելով հոգեւոր կապի մեջ չի մտնում պետության ինստիտուտի հետ: Տոնի ոչ աշխատանքային օրվա գաղափարը հենց այն է, որ դա պետականություն ունեցող հանրության գիտակցության մեջ ընկալվի որպէս պետության կողմից նույնպէս հարգվող հոգեւոր արժեք, ինչը թույլ կտա ամրապնդել հոգեւոր կապը մի կողմից՝ պետության եւ այնտեղ ապրող քաղաքացիների միջեւ, մյուս կողմից՝ մարդկանց, որպէս քաղաքացիների, միջեւ եւ վերջապէս պետության ու եկեղեցու միջեւ:

Վերջին կարեւոր հարցը, որին այս բաժնում կցանկանայինք անդրադառնալ մշակութային տարածքի ձեւավորման հիմնախնդիրն է, որն, ըստ էության, համարյա լիովին դուրս է մնացել պետական ուշադրությունից: Հայաստանի անկախացումից հետո, հատկապէս սեփականաշնորհման գործընթացի սկզբնա-

¹⁵ . Элиаде М., Очерки сравнительного религиоведения, М., 1999, с. 363.

վորումով, արագորեն սկսվեց փոխվել հանրապետության քաղաքների արտաքին տեսքը: Արդեն 1990-1991 թվականներին մանր առետորի անկանոն տարածմանը զուգահեռ, քաղաքներում ի հայտ եկան խառնիճաղանջ սեղանիկներ, կրպակներ, խանութներ, իսկ դրանից հետո նաեւ տներ ու առանձնատներ, խաղատներ ու սրճարաններ, հյուրանոցներ եւ զվարճանքի այլ կենտրոններ, որոնցից շատերը կառուցվում էին նախկին գրախանութների, գրադարանների, կինոթատրոնների, զբոսայգիների ու մշակութային նշանակության այլ օբյեկտների տեղերում: Այս տարերային եւ անվերահսկելի գործընթացը, մասնավորապես որ դրանից ժողովուրդը գտնվում էր լիովին օտարվածության վիճակում, բնակչության մեծամասնության մոտ ձեւավորում էր արդարացի բողոք: Դրա հիմնական բովանդակությունն այն էր, որ խախտվում էին մարդկանց մշակութային հարաբերությունների հիմքում ընկած տարածական կառույցը եւ այն կազմող միավորները: Դրան զուգահեռ, ձեւավորվում էին նոր կիսամշակութային «օջախներ», որոնց մատչելիության հնարավորությունը ունեին սահմանափակ խավեր: Օրինակ, եթե երեւան քաղաքում «Ակադեմկինիզա» գրախանութը համախմբող գործառույթ ուներ ողջ ընթերցող հասարակայնության համար կամ գեղարվեստի սրահ-խանութը ծառայում էր ամբողջ քաղաքի բնակչության գեղագիտական փոխանակային հարաբերություններին, ապա դրանց տեղում հայտնված խաղատները, սպասարկելով այսպես կոչված «նոր հայերի» խավին, ոչ միայն չեն կատարում հասարակական տեսանկյունից համախմբիչ դեր, այլ հակառակը՝ նպաստում են հասարակության պառակտմանը: Նշված օրինակները եզակի չեն: Հիմնական միտումը, որն առկա է մշակութային տարածքի ձեւավորման գործում, կոչված է ծառայելու «նոր» հարուստների խավին: Այսինքն, կարելի է ասել, որ Հայաստանում, հատկապես նրա քաղաքներում ձեւավորվող մշակութային նոր տարածքը չի նպաստում հասարակության համախմբմանը, այլ հակառակը՝ այն ծառայելով հասարակության ընդամենը 3-5 % կազմող ունեւոր խավին, ավելի է խորացնում հասարակության պառակտումը եւ մարդկանց օտարումն իրենց մշակութային տարածքից: Անտեղության եւ անտարբերության մատնված թանգարանների, թատրոնների, գրադարանների, մշակութային տների եւ այլ մշակութային օջախների կողքին հայտնված «նոր հայերին» սպասարկող օբյեկտները սահմանափակում են հանրապետության բնակչության հոգեւոր հաղորդակցման հնարավորությունները: Հայաստանի հասարակ բնակչի համար գնալով ավելի ու ավելի է սահմանափակվում մշակութային հաղորդակցման հնարավորությունը ընդհանուր տարածությունը եւ զուգահեռաբար ընդլայնվում է «նոր հայերի» մշակութային հաղորդակցման միջավայրը:

Բարեբախտաբար, վերջին մեկ-երկու տարում նկատվում են նաեւ որոշ դրական միտումներ: Հատկապես Երեւան քաղաքում աստիճանաբար բարեկարգ-

վում են որոշ զբոսայգիներ, մանկական խաղահրապարակներ, կինոթատրոններ: Սակայն, նշվածն առայժմ այնքան աննշան դեր է խաղում, որ դժվար է նույնիսկ խոսել դրանց հասարակական նշանակության մասին:

Հարկ է գիտակցել, որ առանց համապատասխան մշակութային տարածքի առկայության, չի կարող իրականացվել մշակութային շփումներ եւ մշակութային կյանք, իսկ առանց դրա չեն կարող ձեւավորվել հոգեւոր ընդհանրական արժեքներ, հետեւաբար, առանց մշակութային տարածքի ձեւավորման խնդրի լուծման, չեն կարող նաեւ իրականացվել հոգեւոր ընդհանրակունության ձեւավորմանն ուղղված քայլեր:

Ամփոփելով աշխատանքի այս հատվածը, կցանկանայինք առանձնացնել ազգի հոգեւոր-բարոյական ընդհանրականության ձեւավորման եւ վերարտադրության մշակութային ոլորտին վերաբերող հիմնական սկզբունքները՝

- պրոֆեսիոնալ մշակույթում խրախուսել ժողովրդական մշակույթի հենքի վրա ձեւավորվող ստեղծագործությունները,
- պատմական հիշողության վերարտադրման ոլորտում որպես գաղափարախոսություն որդեգրել պետականության, որպես հոգեւոր արժեքի, կարելիորման քաղաքականությունը՝ շեշտը դնելով պետության եւ պետականության կարելիորման խնդրի վրա,
- պետական վերահսկողության տակ պահել տեղեկատվության միջոցները, որոնք այսօր փաստորեն փոխարինում են տեղեկատվության փոխանցման տարածամասնակյա եւ համաժամանակյա ձեւերին: Արգելել հանրային տեղեկատվության շրջանառության մեջ բռնությունների, սեքսի, դաժանությունների եւ հոգեւոր-բարոյական տեսանկյունից բացասական դերակատարության այլ արժեքների ու գաղափարների քարոզչությունը,
- շարունակել լեզվի ոլորտում որդեգրված քաղաքականությունը՝ սեփական հենքի վրա լեզվական մոռույթների ձեւավորման սկզբունքի խրախուսմամբ,
- պետականորեն կարելիորել համապետական եւ համազգային տոների իրականացումը, նպաստել տոնական միանման մթնոլորտի ձեւավորմանը ողջ հանրապետությունում: Մշակել տոնակատարությունների այնպիսի արարողակարգ, որը կապահովի մասնակցության ընդհանրականությունը եւ մատչելիությունը հանրապետության բոլոր բնակիչների համար,
- պետական քաղաքականություն վարել մշակութային ընդհանուր տարածքի ձեւավորման գործում: Որդեգրել այնպիսի սկզբունք, որ ձեւավորվող մշակութային տարածքը առավելագույնս ծառայի հանրապետության բնակչության լայն խավերի մշակութային լիարժեք հաղորդակցմանն՝ անկախ նրանց սոցիալ-մասնագիտական, տարիքային, սեռային, դասային եւ այլ բնույթի տարբերություններից:

3. Հասարակական կառույցների դերը հոգևոր անվտանգության եւ ազգային բարոյականության միջավայրի ձեւավորման գործում

Ազգային հանրությունը, որը էթնոսի ժողովուրդ տիպից առաջին հերթին տարբերվում է հասարակական համագործակցության տիպերի հարաբերակցությամբ, հոգևոր ընդհանրականության ձեւավորման եւ բարոյական արժեքների վերարտադրության մեջ հասարակական հաստատությունները մասնավոր-մեխանիկականին գերակայում են: Առանց զարգացած հասարակական հաստատությունների, որոնք ապահովում են տվյալ հանրության համակցության բարոյական ու հոգևոր հիմքերը եւ ընդհանուր խնդիրների ու գաղափարների շուրջ հանրության տարբեր հատվածների համախմբումը, գերակա դեր են ստանում մասնավոր շահերով պայմանավորված բարոյական արժեքները, որոնք ձեւավորում են պետական-ազգային տեսանկյունից կենտրոնախույս բովանդակության բարոյականություն: Վերջին տարիներին Հայաստանում ձեւավորվող մեխանիկական արժեքային դաշտը նպաստավոր պայմաններ է ստեղծել հենց նշված որակները կրող բարոյական դաշտի ձեւավորման համար:

Դաշտային հետազոտությունները ցույց են տալիս, որ արժեքային ընկալումներում կատարվող փոփոխությունների հետեւանքով տեղի է ունենում «ձեւով ազգային, բովանդակությամբ խմբակային» արժեքային միջավայրի ձեւավորում: Նշվածի հետեւանքով շատ ազգային արժեքներ, որոնք մեր ավանդական ընկալումներում ունեին համազգային բովանդակություն, ներկայումս պահպանելով ձեւը, ենթարկվում են բովանդակային այնպիսի փոխակերպումների, որոնցում գերիշխող է խմբակային շահը: Նշվածն անդրադառնալով բարոյական արժեքային կողմնորոշիչների վրա, նպաստում է մարդկանց վարքի խմբակայնացմանը: Սրա վտանգավոր կողմն այն է, որ Հայաստանում վերջին տարիներին ձեւավորվող բարոյականությունը մարդկանց մոտ ձեւավորում է բացասական վերաբերմունք պետական, համազգային եւ համահասարակական խնդիրների նկատմամբ¹⁶:

Ասվածն ավելի պատկերավոր եւ ընկալելի դարձնելու համար բերենք բազմաթիվ օրինակներից մեկը: Այսպես. բնակչության մեջ այսօր ձեւավորված բարոյականության համաձայն, ազգակիցների կամ դրացիների կողմից օրի-

նախախտումները, որոնք հանգեցնում են պետական եւ հասարակական շահերի ոտնահարման, համարվում են ընդունելի երեւույթ եւ չեն դատապարտվում: Հակառակը, եթե որեւէ մեկը ազգակցական համակարգում կամ նմանատիպ այլ խմբակային «փակ» կառույցներում իր ազգակցի կամ խմբակցի հակապետական կամ հակահասարակական քայլը կանխելու ուղղված քայլի դիմի, ապա նա անպայմանորեն կպախարակվի եւ նույնիսկ, որպես «վատ» մարդու, կենթարկվի մեկուսացման իր շրջապատի կողմից: Բարոյականության տեսանկյունից անհատը փորձում է պաշտպանել համընդհանուր շահը, որը բխում է պետության բոլոր քաղաքացիների եւ հասարակության անդամների շահից, սակայն որպես ազգակցային կամ այլ տիպի մեխանիկական խմբի անդամ՝ հակադրվում է խմբակային շահին: Բերված օրինակը ցույց է տալիս, որ մեզանում ընդունված բարոյական նորմերն այսօր խոչընդոտում են այնպիսի հասարակական մթնոլորտի ձեւավորմանը, որը նպաստում է համազգային բարոյականության եւ հոգևոր միասնական միջավայրի առողջացմանը եւ նպաստում ազգը առանձին բարեկամների, ծանոթների կամ ընտանիքների խմբավորումների ձեւով վերարտադրության գործընթացին: Նշվածի բացասական կողմը պետականության պայմաններում նրանում է, որ հանգեցնում է պետական ինստիտուտներն այս կամ այն «արտոնյալի» կարգավիճակում հայտնված խմբերին՝ ծառայեցնելու եւ զրկում մնացածներին դրանից օգտվելու հնարավորություններից: Այսինքն, ստեղծված բարոյական իրականությունն այսօր երկրում հասարակական կարգի տեսանկյունից բնակչությանը բաժանել է երկու խմբերի՝ «արտոնյալների» եւ «ոչ արտոնյալների»: «Արտոնյալներն» այն խմբերն են, որոնք պետական կենտրոնական, պետական տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մակարդակներով տիրապետում են իշխանության այնպիսի լծակների, որոնք ծառայեցնում են մասնավոր գործոնով պայմանավորված նեղ խմբակային շահերին: «Ոչ արտոնյալները» բնակչության մեծամասնությունն է, որը զրկված է իշխանության լծակների տիրապետման եւ ի շահ իրենց խմբակային շահի՝ դրա օգտագործման հնարավորությունից¹⁷: Մեր դիտարկումների համաձայն, բնակչության «ոչ արտոնյալ» մեծամասնության բարոյական կողմնորոշիչներն էականորեն չեն տարբերվում «արտոնյալների» բարոյական կողմնորոշիչներից: Տարբերությունն ընդամենը մատչելիության մեջ է. մեկին իշխանությունը մատչելի է, մյուսին՝ ոչ: Ասվածի համար տիպիկ օրինակ կարող է ծառա-

¹⁶ Հայաստանում նշված բացասական դրսեւումների մասին տես նաեւ՝ Շաքարյան Հր., Շաքարյան Լ., Պրոֆեսիոնալիզմի էթիկական տեսանկյունը պառլամենտական մտածելակերպում, Երեւան, 1999:

¹⁷ Այս երեւույթին հեղինակն ավելի մանրամասնորեն անդրադարձել է իր մեկ այլ աշխատանքում: Տես՝ Թադեւոսյան Ա., Քաղաքացիական հասարակության ձեւավորման հիմքերն ու հնարավորությունները Հայաստանում, Երեւան, 2000:

յել դաշտային աշխատանքների ժամանակ գրանցված հետեւյալ նյութը: Գյումրի քաղաքում իշխանություններին անբարոյականության մեջ մեղադրող քաղաքացիներից մեկն, այն հարցին, որ եթե իր եղբոր որդին դառնար քաղաքապետ եւ պետական հաստատությունն իր մասնավոր շահին ծառայեցնելուն ուղղված անձնական խնդրանքը մերժեր, ի՞նչ գնահատականի կարժամանար, իշխանությանը խմբակայնության մեջ մեղադրող մարդը պատասխանեց, որ՝ շատ վատ: Նա բացատրեց, որ ինքը կնեղանար իր ազգականից, քանի որ ազգականն իրավունք չունի հնարավորության դեպքում մերժել ազգականին¹⁸: Մեր այն հարցադրումը, թե այդ դեպքում ինչո՞վ է նա տարբերվում գործող իշխանություններից, բանասացի կողմից չընկալվեց:

Այս օրինակը եզակի չէ: Սակայն սա ցույց է տալիս, որ այսօր մեր հասարակության մեջ արմատավորված բարոյականությունը պետականամետ չէ եւ չի նպաստում համազգային եւ համահասարակական համակեցության հոգեւոր հիմքերի ձեւավորմանը: Ներկա բարոյականությունը եւ այդ բարոյականությունը ձեւավորող արժեքային ընկալումների սահմանները խիստ նեղացված են եւ հանգեցված են ընտանեկան, ազգակցական կամ, լավագույն դեպքում, մեխանիկական բնույթի խմբի պահանջումներին ու շրջանակներին: Այս դեպքում բարոյական մեծ չափանիշներն ինքնին վտանգավոր են դառնում հասարակության զարգացման եւ պետության ամրապնդման տեսանկյունից, քանի որ նպաստում են ազգակցային կամ խմբակային բնույթի շրջանակների հոգեւոր ընդհանրականության ձեւավորմանը: Սա ինքնին վտանգավոր չէր կարող համարվել, եթե այն աչքի չընկներ կարեւոր մեկ այլ հատկանիշով՝ պետականին եւ հասարակականին հակադրությամբ եւ այդ տեսանկյունից կազմաքանդիչ գործառնությամբ:

Ելնելով վերը նշվածից, հարկ է նշել, որ հոգեւոր անվտանգության եւ դրա առանցքը կազմող բարոյական դաշտի ձեւավորման տեսանկյունից առաջնային սկզբունքային նշանակության խնդիրը հանրային բարոյականության մեջ եւ այն ձեւավորող հասարակական նորմերում խմբակայնությունը պետականամետությամբ փոխարինելու մեջ է: Այսօր հայ հանրույթի հասարակական վարքում առաջնային նշանակություն ունեցող խնդիրը խմբակային բարոյական նորմերի ստորադասումն է պետական եւ հանրային բարոյական նորմերին:

Կարելի է ասել, որ ներկայումս Հայաստանում գերիշխող է անհատական-խմբակային շահերի ներդաշնակությամբ ուղղված բարոյականությունը, ի հակադրություն անհատական-հասարակական, պետական շահերի ներդաշ-

նակման բարոյականությամբ:

Այս խնդրի հաղթահարման հարցը մենք կփորձենք քննել երկու հարթություններում

- հասարակական դերերի աստիճանակարգման ու շարժունության,
- անհատ - խումբ - հասարակություն փոխհարաբերակցության:

Հասարակական դերերի աստիճանակարգման ու շարժունության գործառնությամբ հանրության հոգեւոր ընդհանրականության եւ բարոյականության գործում: Հասարակության մեջ բարոյականության ձեւավորման գործում առանցքային դերակատարություն ունի հասարակական դերերի բազմազանության գործում: Հասարակական դերերի բազմազանության ձեւավորման համար առանցքային նշանակություն ունի մասնագիտական բաժանումը¹⁹: Ինչպես արդեն նշվեց, վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած տնտեսական գործընթացների հետեւանքով էականորեն տուժեց հասարակության մասնագիտական բազմազանությունը: Հայաստանի նորագույն պատմությանը հետադարձ հայացք նետելու դեպքում, կարելի է պնդել, որ համազգային հոգեւոր եւ մշակութային վերելքի տարիները համընկնում են Հայաստանում արտադրական տնտեսության զարգացման եւ մասնագիտական բազմազանության ի հայտ գալուն: Արդեն 1980-ական թվականների վերջում Հայաստանում առկա էր հարուստ մասնագիտական կազմ ունեցող ուրբանիզացված բնակչություն: Ըստ այդմ, հասարակության մեջ առկա էր նաեւ հասարակական դերերի աստիճանակարգ, որում մտավորականությունը գրավում էր բավականին բարձր դիրք:

Հայաստանի անկախացումից հետո, ինչպես նշվեց, իրականացված տնտեսական վերափոխումները հանգեցրին մասնագիտական կարողություններով պայմանավորված զբաղվածության ծավալների կրճատման: Դրան զուգահեռ, հասարակության մեջ տեղի ունեցած արժեքային գերակայությունների փոփոխությունները հանգեցրին նաեւ մինչ անկախությունը հասարակայնորեն հարգի /պրեստիժային/ դերերի ստորակարգմանը նոր ի հայտ եկած դերերին:

Հասարակական դերերի տարապատկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ի հայտ եկած նոր դերերը հիմնականում կապված են փողի, նյութական բարեկեցության և ուժային ազդեցիկության գործոնի հետ: Այս առումով հատկապես բացասական է մտավորականության խավի կարգավիճակի ստորակարգումը նոր ի հայտ եկած ոչ մասնագիտական գործոնով պայմանավորված հասարակական դերերին: Ընդհանրապես, հասար-

¹⁸ ԴԱԼ:

¹⁹ Э. Дюркгейм, О разделении общественного труда, М., 1996, сс. 190 -192.

րակական դերերի աստիճանակարգման համակարգում մասնագիտական կոմպետենտության գործոնի դերի ամտեսումը հանգեցրել է նրան, որ հասարակական կարգավիճակային հարաբերություններում գերակա դիրք են ձեռք բերել իռացիոնալ հեղինակությունները²⁰: Իռացիոնալ հեղինակություն ասելով նկատի ունենք այնպիսի հասարակական դերակատարներին, որոնք իրենց հանրային կարգավիճակը ձեռք են բերում ֆինանսական եւ ուժային լծակների կիրառման միջոցով: Նշվածի բացասական կողմը նրանում է, որ դա արգելակում է հասարակական դերերի սանդղակում կարգավիճակային շարժունության հնարավորությունը այն մարդկանց եւ մասնագիտական խմբերին, որոնք իրենց գործունեությամբ ներդրում են կատարում հանրային կյանքում: Հայաստանում հասարակական դերերի փոխակերպվող աստիճանակարգման համակարգի աննորմալությունն այն է նրանում, որ կարգավիճակային առումով ավելի գերակա դիրք են ստանում ոչ թե հանրային եւ պետական կյանքում ներդրում կատարողները, այլ հակառակը՝ դրանք յուրացման միջոցով սպառողները: Այս առումով հետաքրքիր փոխակերպումներ են տեղի ունենում հենց հասարակական դերերի բովանդակային հարթությունում: Եթե կոնստրուկտիվ հասարակական-պետական համակարգերում բարոյական արժեւորման տեսանկյունից առաջնային տեղ է տրվում հասարակական համագործակցության տարբեր ոլորտներում ներդրում կատարող անհատներին, ապա մեր հասարակության մեջ հակառակը՝ այն պետական պաշտոնյան, որը չի զբաղվում կաշառակերությամբ, ավելի ստորադաս կարգավիճակում է գտնվում, քան նա, ով որ զբաղվում է կաշառակերությամբ եւ այդ միջոցով իր համար ապահովում ֆինանսական եւ ուժային ազդեցության լծակներ: Մեկ այլ նկատառում նույնպես. օրինապահությունը մեր հասարակական հարաբերություններում ավելի քիչ ողջունելի է, քան օրինախախտումը: Խոսքը վերաբերում է հատկապես իրական արժեքային հարթությունում կառուցվող հարաբերություններին: Ինչ վերաբերում է երեւոյթի բարոյական արժեւորմանը իդեալական հարթությունում, ապա այնտեղ արժեւորվում է օրինապահությունը: Այսինքն, մեր բարոյական իրականության մեջ անցումային շրջանի տարիներին տեղի է ունեցել խոսքի եւ գործի միջեւ խզում: Խոսքային դատողություններում մեր հասարակությունն ունի բարոյականության բավականին բարձր աստիճան, սակայն գործնական հարաբերություններում բավականին ցածր կամ կարելի է ասել՝ խոսքայինի ճիշտ հակառակը: Այն դեպքում, երբ

²⁰ Իռացիոնալ եւ ռացիոնալ հեղինակությունների մեր տեսանկյունները բխում են է.Ֆրոմմի արտահայտած տեսանկյուններից: Տե՛ս՝ Э.Фромм, Человек для самого себя / Псих-оанализ и этика, М., 1993, сс. 186-190.

մարդիկ խոսքում դատապարտում են կաշառակերությունը, միեւնույն ժամանակ իրական փոխհարաբերություններում պատրաստ են ոչ միայն իրենք կաշառք տալ, այլեւ հարգանքի /պատվի/ արժանացնել կաշառակեր պաշտոնյային: Որպես դրա ապացույց բերենք նորից տիպիկ մի օրինակ մեր կյանքից: Բավականին տարածված երեւոյթ է, երբ կաշառակերը, եթե նա իրականացնում է մասնավոր շահով պայմանավորված գործարք, տվյալ քաղաքացու կողմից հաճախ արժանանում է «պատվի»: Ընդունված արտահայտությամբ դա կոչվում է «պատիվ տալ», երբ մարդն ի շահ իր մասնավորի՝ փոխհատուցում է կաշառակերին օրինախախտ ճանապարհով իրեն ձեռնտու գործարք իրականացնելու համար: Ավանդականորեն մեր հասարակական մշակույթում եղել է «պատիվ տալու» երեւոյթը: «Պատիվ տալու» ձեւերից մեկը եղել է հյուրասիրության սեղանը: Սակայն «պատիվ տալու» առիթը եղել է ազնիվ արարքը: Երբեւիցե ազգային-ավանդական պատվի ընկալումը չէր կարող թույլ տալ պատիվ մատուցել հանրային-պետական շահերը ոտնահարողին՝ ի տարբերություն ներկայիս հայաստանյան բարոյական նորմերի:

Բարոյական ձեւախեղումների են ենթարկվել նաեւ այնպիսի առանցքային հասկացություններ, ինչպես, ասենք, «լավ մարդը», «շնորհքով մարդը», «արդարությունը», «ազնվությունը», «ազատությունը» եւ այլն: Առանձին-առանձին չամողորհառմալով դրանց ենթատեքստային փոփոխություններին, մշենք ամենից առանցքային ձեւախեղումը՝ ազգային բարոյականության համար որոշիչ բոլոր այդ հասկացությունների բովանդակությունը հարմարեցվել է խմբակային շահերին եւ գերակայություններին: Այսպես, օրինակ, լավ կամ շնորհքով մարդ կարող է համարվել նա, ով ոչ թե պետական շահի պաշտպանությանն է ուղղորդում իր գործունեությունը, այլ մասնավոր-խմբակային: Կամ ազնվությունն ու արդարությունը կարելի է համարել նաեւ ազգակցական կամ մեխանիկական այլ բնույթի խմբի շրջանակներում: Եթե մարդը անարդարության եւ անազնվության միջոցով հնարավորություն է ստեղծում իր մեխանիկական խմբի անդամների համար անօրինական ճանապարհով եկամուտներ վաստակելու, նա չի համարվում անազնիվ: Կարելի է, որ նա խմբի անդամների հանդեպ լինի արդար եւ ազնիվ: Այսպիսով, պետական բարոյականության տեսանկյունից անօրինական վարք ցուցաբերող մարդը նման բարոյական ընկալումների պայմաններում կարող է զնահատվել որպես արդար ու ազնիվ մարդ եւ արժանանալ հարգանքի, այն դեպքում, երբ նրա վարքի հետեւանքով պետությունը եւ հասարակությունը զգալի վնասներ է կրում: Ստեղծված իրավիճակը մպաստում է նաեւ, որ ավելի բարեկեցիկ պայմաններ ունենալու հնարավորություն ստանում են ավելի շատ խմբակային բարոյականության, քան հանրային-պետական բարոյականության կրողները:

Նշվածը բավականին լուրջ վտանգներ է ստեղծում մեր պետական-հասարակական կյանքի կազմակերպման տեսանկյունից, քանի որ այնպիսի կարեւոր հասարակական դերեր, ինչպես, ասենք, ուսուցիչն է կամ գիտնականը, հասարակական մեղ միջավայրերում ավելի ցածր կարգավիճակում են հայտնվում, քան, ասենք, «հարգված տղա» կոչվող քրեամետ բնույթի տարրերը:

Կարելի է ասել, որ մեր պետական հասարակական կյանքում բարոյական արժեքները եւ կողմնորոշիչները դեռեւս չեն ձեւավորվել եւ դրանց ձեւավորումն առանցքային նշանակության խնդիր է: Առավել եւս կարեւոր է բարոյական այնպիսի կողմնորոշիչների ձեւավորումը, որոնք կարող են ապահովել հասարակական պետական կյանքում ներդրում ունեցող հասարակական այնպիսի դերերի առաջնայնությունը, որոնք բնորոշվում են ռացիոնալ /կոմպետենտության սկզբունքով պայմանավորված/ հեղինակության հատկանիշներով:

Կարելի է ասել, որ հասարակական դերերի աստիճանակարգում այսօր առաջնային տեղ են զբաղում խմբակային նշանակության դերերը, իսկ համընդհանուր կարեւորության հասարակական դերերը մղվել են ստորին պլան: Այս համատեքստում ճիշտ կլինի նկատել եւս մեկ հանգամանք՝ տեղի է ունենում այնպիսի հասարակական դերերի բարոյագրվում, ինչպիսիք դասախոսն է, բժիշկը, ուսուցիչը եւ այլն: Խնդիրն այն է, որ իրական հարաբերություններում այսօր ավելի արտոնյալ դիրքում են հայտնված այնպիսի բժիշկները, դասախոսները եւ ուսուցիչները, որոնք հասարակական դերի կերպին հարմարեցրել են մասնավոր բնույթի բարոյականությունը: Խոսքը վերաբերում է կաշառակերներին եւ հանրային շահը մասնավորին ստորադասողներին: Այսօր իրական հարաբերություններում ավելի ցածր աստիճանում է այն բժիշկը, դասախոսը, ուսուցիչը, որոնք կաշառակերությամբ չեն զբաղվում, բայց ապրում են ոչ հարուստ կյանքով: Իսկ նույն մասնագիտությունների ավելի բարվոք պայմաններում ապրող կաշառակերները, որոնք, ի դեպ, հանդես են գալիս որպես այդ հասարակական դերերը ներկայացնող էլիտար խմբեր, հասարակական միջավայրում ավելի արտոնյալ դիրք ունեն:

Ներկայացված հիմնահարցը ունի մի շատ կարեւոր տեսանկյուն նույնպես: Խոսքը վերաբերում է առանձին հասարակական դերերի ներքին բարոյականության խնդրին: Ներկայումս առկա միտումը այնպիսին է, որ տվյալ հասարակական դերի շրջանակներում արտոնյալ կարգավիճակ են ձեռք բերում խմբակային բարոյականության արժեքներով առաջնորդվողները: Իսկ համընդհանուր բարոյականության կրող շրջանակները հայտնվում են ստորադաս վիճակում: Սա իր հերթին բերում է նրան, որ հասարակական դերերն

իրենց բովանդակությամբ ստանում են խմբակային բնույթ եւ խոչընդոտող դեր կատարում պետականամետ եւ ազգային բարոյական ու հոգեւոր արժեքային միջավայրի ձեւավորման գործում: Ուստի, կարեւոր խնդիրներից մեկը առանձին հասարակական դերերի համար բարոյական այնպիսի կողոպտների ձեւավորումն է, որը կապահովի տվյալ հասարակական դերը կրող անհատների կամ խմբերի պետականամետ եւ ազգանպաստ բարոյականության դրսեւորմանը:

Ազգի հոգեւոր ընդհանրականության մթնոլորտի ձեւավորման գործում, ինչպես նշվեց, կարեւոր դերակատարություն ունեն հասարակական ինստիտուտները: Հայաստանում, մեր հետազոտությունների համաձայն, գործառույթային տեսանկյունից առաջնային դեր են կատարում մեխանիկական բնույթի հասարակական ինստիտուտները, որոնք հիմնականում նպատակաուղղված են մեղ մասնավոր շահերի բավարարմանը: Նման ինստիտուտների դերակատարությունը, երբ թույլ են ձեւավորված համահասարակական նպատակաուղղվածության ինստիտուտները, կարող են հանգեցնել հասարակության պառակտվածության այնպիսի վիճակի, որը դժվարացնում է պետական եւ ազգային խնդիրների իրագործումը: Հատկապես, ազգային անվտանգության տեսանկյունից այդպիսի իրավիճակը խիստ խոցելի է դարձնում պետությունը:

Այս առումով ՀՀ-ում առաջնային կարեւորության խնդիրներից է քաղաքացու բարոյականության եւ բարոյական կողոպտի ձեւավորումը: Սա փաստորեն, հասարակական /այդ թվում եւ մասնագիտական/ դերերի բարոյական կողոպտի ձեւավորման խնդիրն զուգահեռ երկրորդ կարեւոր խնդիրն է: Քաղաքացու բարոյականության հիմնական հատկանիշը նրա վարքում նախ՝ պետականամետության եւ պետական շահի գերադասումն է մեղ խմբակային շահերից եւ երկրորդ՝ անհատի ու պետության շահերի ներդաշնակեցումը: Նման բարոյականությունն անհատի վարքի հիմնական կողմնորոշիչը դարձնում է «պետության բարօրությունը դա նաեւ մարդու բարօրությունն է» բանաձեւը:

Թե՛ կառավարողի եւ թե՛ կառավարվողի համար քաղաքացու բարոյականությունն ընդհանուր է եւ հենված է հիմնական առանցքային հասկացությունների վրա: Դրանք են. հասարակության բոլոր անդամների ձգտումը արդարությանը, ստեղծագործ գործունեությունը, վերջինիս համար հավասար հնարավորությունների ու պայմանների ձեւավորումը, բոլորի համար հավասար իրավունքների եւ պարտականությունների հաստատումը, այս ամենի համար երաշխավոր պետական հաստատության ձեւավորումը եւ պահպանումը, իշխանությանը որպես կառավարման, այլ ոչ իշխելու գործիքի մոտեցումը: Հատկապես, վերջինս խիստ կարեւոր է, որ իշխի հասարակության մեջ:

Առանց իշխանության նման բարոյական ընկալման, հասարակության մեջ դժվար է ունենալ այնպիսի կառավարող էլիտա, որը չի ձգտի իշխանությունը մասնավոր շահերին ծառայեցնելուն: Եթե հասարակության մեջ առկա բարոյական չափանիշներն ուղղված չեն կառավարող էլիտայի իշխանատենչությունը սահմանափակելուն, ապա նման հասարակությունը դատապարտված է ավտորիտար համակարգում ապրելու, քանի որ հասարակության մեջ առկա բարոյականությունն ինքը ավտորիտար է, այլ ոչ մարդասիրական: Մարդասիրական բարոյականությունը քաղաքացիական բարոյականության առանցքային տարրն է: Մարդասիրական բարոյականությունն ասելով նկատի ունենք, որ մարդը համարվում է արժեքների արժեք, եւ բոլոր հասարակական-պետական հաստատությունների գործունեությունն ուղղված է տվյալ հանրությանը ապրող բոլոր մարդկանց բարօրությանը, անկախ նրա կարողություններից: Մարդասիրությունը տվյալ հասարակության ներսում հոգեւոր ընդհանրականության ձեւավորման բարոյական մնացած բոլոր կողմնորոշիչներից առանցքայինն է: Եթե բացակայում է մարդուն արժեւորելու առանցքային պայմանը, ապա տվյալ հանրություն կխախտվեն նաեւ մնացած բարոյական չափանիշները՝ արդարությունը, ստեղծագործ գործունեությունը, դրա համար հավասար հնարավորությունների ձեւավորումը, իրավունքների եւ պարտականությունների հավասարությունը եւ այլն:

Մարդասիրական բարոյականության ձեւավորման կարեւորագույն պայմանը մարդու ստեղծագործ կարողությունների դրսեւորման եւ իրացման պայմանների ձեւավորումն է: Հատկապես հայ ժողովրդի համար ստեղծագործ աշխատանքի արժեւորումն ունեցել է ազգային արժեքի կարգավիճակ եւ այն դեռեւս պահպանվում է իդեալական գործառնական արժեքային հարթությունում: Դրա կարեւորումը զգալի տարածում ուներ նաեւ 1988-1991թթ. ազգային-ազատագրական պայքարի տարիներին: Այդ տարիներին մեր կողմից հավաքված ազգագրական նյութերը վկայում են, որ ժողովուրդը Հայաստանի անկախության իմաստավորումներից մեկը համարում էր այն, որ յուրաքանչյուր հայ դարերով երազած իր անկախ պետության մեջ կունենա հավասար հնարավորություններ աշխատելու եւ արժանավայել ապրելու համար: Ազգային պայքարի տարիներին ձեւավորված համախմբվածությունը եւ հոգեւոր ընդհանրականության մթնոլորտն սկսվեց խարխիլվել, երբ նման պայմանների ձեւավորումն անտեսվեց կառավարող էլիտայի կողմից: Ներկայումս նույնպես, Հայաստանի զբաղված բնակչության մեծամասնությունը, հատկապես առեւտրի մեջ ներգրավվածները, պայմանների առկայության դեպքում ստեղծագործ եւ մասնագիտական որակներ պահանջող աշխատանքը կգերադասեին առեւտրից: Շատերի մոտ դա բացատրվում է մասնագիտական աշխա-

տանքից հոգեւոր բավարարվածությունն ստանալու գործոնով: Վերջինիս տակ մարդկանց մեծամասնությունը հասկանում է ստեղծագործ հատկանիշների դրսեւորումը եւ իրացումը: Ընդհանրապես, ստեղծագործ գործունեության միջոցով մարդկանց մասնագիտորեն ինքնաիրացման հնարավորությունների ստեղծումը հասարակության մեջ առկա հոգեւոր եւ բարոյական արժեքային ներկայիս անկումային վիճակը հաղթահարելու հիմնական ելքերից մեկն է:

Հարկ է նկատել, որ նման իրավիճակը փոխում է նաեւ հասարակության մեջ մարդու արժեւորման չափանիշները: Նյութական չափանիշների գերակայությունը սկսում է զիջել ստեղծագործ գործունեության չափանիշին:

Ամշուշտ, նման իրավիճակի ձեւավորումը գերադասելի կլիներ, որ նախածեղվեր պետության կողմից: Այսինքն, պետությունը Հայաստանում ստեղծագործ աշխատանքի երաշխավորը դառնալու կամք ցուցաբերեր: Սակայն պետության գործոնը միայն բավարար չէ: Չափազանց կարեւոր է հասարակական հաստատությունների գործունեությունը, որոնք մեզանում դեռեւս բավարար չափով չեն ձեւավորված: Ըստ էության, մշված երկու գործոնները փոխադարձորեն կապված են, եւ մեկի փոխակերպումը պայմանավորում է նաեւ մյուսի փոխակերպումը:

Ցավոք, այսօր Հայաստանում տնտեսական ոլորտում առկա կլանային կառույցները լուրջ խոչընդոտներ են հասարակության աշխատանքային ներուժ ունեցող շրջանակների ինքնակազմակերպման եւ գործունեության ծավալման համար: Այդ կառույցները, այսօր սերտաճելով պետական իշխանության հաստատությունների հետ, երկրում նպաստում են ավտորիտար բարոյականության ձեւավորմանը, որի վկայությունը հասարակության մեջ եւ իշխանության բոլոր օղակներում «Վլաստի» ստվերային ինստիտուտի գերիշխանությունն է:

«Վլաստի» ինստիտուտը թաղային այն հեղինակությունների ինստիտուտն է, որոնք իրենց կազմակերպվածության եւ անպատիժ քրեամետության շնորհիվ կարողանում են հասարակության նեղ շրջանակներում վախի եւ ուժի ներազդեցության միջոցով իրենցից կախման մեջ պահել հասարակության մնացած բոլոր շրջանակներին: «Վլաստի» ինստիտուտները թաղային միջավայրերում հաճախ ներկայացնում են քրեամետ արժեքներ դավանող, այսպես կոչված, «հարգված տղերքը»: Առանց նման շրջանակների հետ համաձայնեցնելու, եթե մարդը չի ներկայացնում իշխանություն կամ քրեամետ ազդեցիկ օղակ, կամ վայելում դրանց հովանավորությունը, չի կարող տվյալ թաղամասում ձեռներեցության որեւէ տեսակով զբաղվել: «Վլաստի» ինստիտուտները նաեւ ընտրությունների շրջանում կարեւոր դեր են կատարում մարդկանց որոշ շրջանակների քաղաքական կամքի կողմնորոշման գործում: Հարկ է նկատել,

որ «վլաստի» սկզբունքը բնորոշ է նաեւ իշխանութան կլանային համակարգին եւ հանդիսանում է կոռուստացվածության հիմնական պատճառը²¹: Նշվածը նպաստում է իշխանությունից ժողովրդի օտարմանը եւ իշխանությունը նեղ խմբերի շահերին ծառայեցնելուն: Սա էլ իր հերթին նպաստում է հասարակության մեջ իշխանության հոգեւոր հիմքերի սնանկացմանը:

Հասարակական համակարգում ստվերային նշված ինստիտուտի գերիշխանությունը եւ ազդեցության մեծ չափերը նպաստում են այսօր հասակության մեջ խմբակային շահերի եւ ավտորիտար բարոյականության ձեւավորմանն ու վերարտադրությանը: Հասարակության մեջ ստվերային ինստիտուտների, մասնավորապես «վլաստի» ինստիտուտի գերիշխանության վերացումը մարդասիրական բարոյականության եւ հանրույթը ստեղծագործ հոգեւոր արժեքների շուրջ համախմբելու կարեւոր պայմանն է: Առանց ստեղծագործ միջավայրի ձեւավորման, հոգեւոր անվտանգության մասին մտածելն իսկ ավելորդ է, քանի որ հոգեւոր արժեքներն առաջին հերթին պայմանավորված են մարդու ստեղծագործ կարողությունների դրսևորման եւ իրացման պայմանների ձեւավորմամբ:

Ասվածից հետեւում է, որ առաջնային կարեւորության խնդիրներից է հասարակական լեգիտիմ, ոչ ստվերային ինստիտուտների ձեւավորումը, որոնք կարող են հակակշռել «վլաստի» քրեամետ եւ ստվերային բնույթի հասարակական այլ ինստիտուտներին: Հենց նման ինստիտուտների ձեւավորումն ուղղակիորեն կապված է քաղաքացու բարոյականության ձեւավորման խնդրի հետ: Այսինքն, ժամանակակից հայ հասարակության մեջ հոգեւոր բարոյական միջավայրի ձեւավորման գործում կարեւոր նշանակության գործոնը հասարակական ինստիտուտների քաղաքացիականացումն է: Առանց հասարակական-քաղաքացիական ինստիտուտների ձեւավորման, անհնարին է քաղաքացու բարոյական կողբսի ձեւավորումը եւ մարդկանց հասարակական վարքում այն գործառական դարձնելը:

Հասարակական առկա ինստիտուտների, մասնավորապես հասարակական կազմակերպությունների գործունեության ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ դրանք դեռեւս չեն իրականացնում հասարակության մեջ համախմբիչ գործառույթ²²: Դրանք հիմնականում գործում են հասարակության լայն շր-

²¹ «Վլաստի» ինստիտուտի մասին հեղինակի մոտեցումները մանրամասն տես՝ Թադեոսյան Ա., Քաղաքացիական հասարակության հիմքերն ու հնարավորությունները Հայաստանում:

²² Քաղաքացիների իրազեկությունը եւ մասնակցությունը Հայաստանում, Ազգային սոցիոլոգիական հարցում, Երեւան, 2001, էջ 24-25:

ջանակներից մեկուսի եւ ազդեցիկ չեն: Դրանք չեն կարող նաեւ իրականացնել առկա ստվերային ինստիտուտներին հակակշռելու գործառույթ: Սակայն հասարակական կազմակերպությունները լուրջ գործոն կարող են դառնալ, եթե նրանք կարողանան ինքնահաստատվել հասարակական գործառույթներ ձեռք բերելու տեսանկյունից: Այս առումով իրենց դերակատարությունն ունեն նաեւ պետական հաստատությունները, որոնք պետք է հասարակական կազմակերպություններին դիտեն որպես գործընկերներ, մասնավորապես, նրանց միջոցով հանրության լայն շրջանակներին պետական կառավարման, հատկապես վճիռների եւ որոշումների կայացման գործընթացին մասնակից դարձնելու առումով: Հասարակական կառույցները կարող են կատարել կառավարման օղակների եւ հասարակության միջեւ միջնորդի գործառույթ, ինչն այս ինստիտուտներին կարող է դարձնել հանրային տեսանկյունից առավել ազդեցիկ եւ հակակշռ ստվերային ինստիտուտներին: Հասարակական հաստատություններն այն հաստատություններն են, որոնց միջոցով պետությունը, կամքի առկայության դեպքում, կարող է կազմակերպել կառավարման համակարգին հասարակական պատվերի ձեւավորումը: Ներկայումս հասարակությունից պետության մեկուսացվածությունը եւ օտարվածությունը, ինչպես նշվեց, նպաստում է նրան, որ պետական իշխանության կառույցները օգտագործվում են նեղ խմբակային շահերին, քանի որ վճիռների եւ որոշումների կայացումը իրականացվում է նեղ խմբերի շահերից բխող եւ նրանց կողմից իջեցվող պատվերի հիման վրա: Կառավարմանը իջեցվող պատվերի հասարակական դաշտի ընդլայնումը առաջային կարեւորության խնդիր է առնվազն երկու կտրվածքով. նախ՝ երկրի բնակիչներին երկրի քաղաքացիների վերածելու, եւ երկրորդ՝ իշխանության նկատմամբ ստվերային ինստիտուտների վերահսկողությունը սահմանափակելու առումներով: Առանց նշվածի երկրում անհնարին է իրականացնել քաղաքացիական, հետեւաբար եւ պետականամետ այնպիսի բարոյականության ձեւավորումը, որի առանցքում ընկած է մարդու ստեղծագործ հատկանիշների դրսևորման եւ իրացման գաղափարը: Այսինքն, կարելի է ասել, որ հասարակական ինստիտուտների դերակատարությունը կարող է առանցքային նշանակություն ստանալ երկրում «վլաստի» ինստիտուտների կողմից հաստատված ավտորիտար բարոյականության հակակշռման եւ մարդասիրական բարոյականության հաստատման մեջ: Իսկ առանց մարդասիրական բարոյականության, չափազանց դժվար է այնպիսի բարոյական միջավայրի ձեւավորումը, երբ մարդկանց հոգեւոր համախմբվածության հիմքում ընկած են արդարության, ազատության, ստեղծագործ աշխատանքի, հավասարության գաղափարները: Առանց նման բարոյականության անիրականանալի է Հայաստանի ժողովրդի հոգեւոր միասնականությունը:

նը քայքայող, բարոյալքման ու հուսալքման մեջ գցող ավտորիտար շրջանակների հաստատած «արտոնյալության» ու «ոչ արտոնյալության» բարոյականությունը:

Այսպիսով, ամփոփելով վերլուծության այս բաժինը կարելի է ասել, որ հոգեւոր անվտանգության եւ համախմբող բարոյական արժեքների ձեւավորման գործում առաջնային խնդիրները հետեւյալներն են՝

- հասարակության մեջ մարդասիրական բարոյական կողեքսի ձեւավորումը,
- հասարակական դերերի համար համազգային, համահասարակական բովանդակությամբ հագեցած բարոյական կողեքսի ձեւավորումը,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացու բարոյական կողեքսի ձեւավորումը,
- հասարակության մեջ հոգեւոր միասնականությունը քայքայող ավտորիտար բարոյականություն ձեւավորող ստվերային եւ քրեամետ ինստիտուտներին հասարակական լեզուի միաստուցիոնալ հակակշիռների ձեւավորումը:

4. Հայ եկեղեցու դերը էթնիկ հանրույթի հոգեւոր բարոյական հիմքերի ձեւավորման գործում

Սույն բաժնի վերնագրումից արդեն երեւում է, որ այս մեր գլխավոր խնդիրը եկեղեցու հասարակական դերակատարության պարզաբանումն է: Գաղտնիք չէ, որ մեր ժողովրդի պատմական ճակատագրի բերումով Հայ Առաքելական եկեղեցին դարեր շարունակ, կրոնադավանաբանական գործառնություններին զուգահեռ, իրականացրել է ազգային մշակույթի, ավանդույթների պահպանիչ եւ դրանց շուրջ մեր ժողովրդին համախմբելու գործառնություն: Հայ Առաքելական եկեղեցին մեծ դեր է խաղացել հասարակական համերաշխության եւ համագործակցության մթնոլորտի ստեղծման եւ ինքնության պահպանման առումով²³: Պատմությունը վկայում է, որ երբեմն ազգային-կրոնական գործոնն իր ազդեցիկությամբ անգամ գերազանցել է էթնիկ գործոնին: Դրա վառ օրինակներից է հայկական ընդհանրությունից կաթոլիկ հայերի օտարումը՝

²³ Տես՝ Միրունյան Կ., Քրիստոնեության դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում/ Եկեղեցի եւ պետություն, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երեւան, 2000, էջ 11-28:

ընդհուպ հայ կաթոլիկի եւ հայ առաքելականի միջեւ խնամհական կապերի հաստատման անընդունելիությունը, որ սկիզբ դրեց «Ֆրանգ» ինքնանվանմանը:

Խորհրդային 70-ամյա բռնի աթեիզմը Հայաստանում ուղղված էր հայ մարդու մեջ քրիստոնեական հավատքի ոչնչացմանը, ինչն, անշուշտ, ունեցավ խիստ բացասական հետեւանքներ: Մասնավորապես, խախտվեցին քրիստոնեական հավատքով պայմանավորված բարոյական այնպիսի հատկանիշներ, որոնք պայմանավորում էին հասարակական համագործակցության հոգեւոր բնույթը: Խորհրդային տարիներին ազգային մշակութային կյանքից համարյա դուրս մղվեցին մեր ժողովրդի հոգեւոր ընդհանարականության վերարտադրության գործում առանցքային կարեւորության տոնածիսական տարրերը, որոնք փոխարինվեցին նոր կրոնի՝ «կոմունիզմի» տարրերով ու խորհրդանիշներով: Պատահական չէ, որ խորհրդային ժամանակների կարոտախտը դեռեւս լուրջ գործոն է հայ հասարակության հոգեւոր-բարոյական կողմորոշումներում²⁴:

Չնայած խորհրդային շրջանի լուրջ դժվարություններին, Հայ Առաքելական եկեղեցին, շնորհիվ իր դարավոր ավանդույթների պահպանման կարողացավ դիմակայել եւ Խորհրդային բռնատիրության փլուզումից անմիջապես հետո, որպես ազգային ինքնագիտակցության եւ էթնիկ պատկանելության առանցքային խորհրդանիշ, շարունակեց պահպանել եւ վերահաստատել իր գործառնությունները: Դրա վառ ապացույցը կարելի է համարել 1988-ի գարթոնքի շրջանից ի վեր եկեղեցական ծիսակատարությունների նկատմամբ ժողովրդի, հատկապես երիտասարդության, հետաքրքրության եւ կապվածության աճը: Անշուշտ, ամենատարածված ծիսակատարությունը մոռ վառելն է, որն ավելի ու ավելի է տարածվում բնակչության շրջանում՝ աստվածաշնչյան դրույթներին եւ քրիստոնեական կրոնի հիմունքներին, բարոյականությանն ու գաղափարախոսությանը ծանոթության աստիճանից անկախ: Այսօրվա երիտասարդությունը մոռ վառելու արարողությունը համարում է Աստծո նկատմամբ հավատի արտահայտման հիմնական ձեւը: Հասարակության մեջ ամենատարածված ծիսական արարողությանը՝ մոռ վառելուն, հաջորդում են իրենց տարածվածությամբ վերջին տարիներին ավելացող մկրտության ու մատաղի արարողությունները: Հատկապես մարզային բնակչության միջավայրում վերջին տարիներին նկատվում են նաեւ ուխտագնացության դեպքեր: Այսպես, օրինակ, անկախության տարիներին ժողովրդի մեջ վերականգնվել է Վայոց

²⁴ Թադեւոսյան Ա. «Նոր հերոսներ եւ խաղի հին կանոններ,» Հայացք Երեւանից», 1998, թիվ 2, էջ 22-26:

ծորի մարզում Աբ Խաչ եկեղեցու աշնանային մեծ ուխտագնացությունը: Ուխտագնացության որոշ ավանդույթներ վերականգնվում են նաև Կոտայքի, Արագածոտնի մարզերի բնակչության միջավայրում: Ժողովրդի մեջ աստիճանաբար տարածում են գտնում նաև եկեղեցական քրիստոնեական ավանդական որոշ տոներ եւ ծեսեր եւս՝ Սուրբ Ծնունդ, Տյառնընդառաջ, Հարություն, Ծառզարդար, Վարդավառ, Սուրբ Խաչ (Աբխեչ), Սուրբ Աստվածածնի տոները: Մնացած տոներն ու ծեսերը առավելապես մասնավոր բնույթ են կրում²⁵:

Հայ Առաքելական եկեղեցու ավանդույթների վերակենդանացումը, սակայն, ուղեկցվում է աղանդների, անգամ ոչ քրիստոնեական, մասնավորապես կրիչնայականության, եհովայականության տարածմամբ: Հետաքրքիր է, որ կրիչնայականներ հայտնվել են ոչ միայն Երեւանում, այլև ավանդույթայնությամբ աչքի ընկնող գյուղական բնակավայրերում: Այս առումով հատկապես հետաքրքիր է Վայոց ձորի Շատին գյուղի օրինակը, ուր 1988-89թթ. արդեն հիմնավորվել էր բավական ամուր հիմքեր ունեցող կրիչնայական աղանդ: Նույն գյուղում ժողովրդի շրջանում մեծ ազդեցություն ունեն գտնվողական արտահայտությամբ «50-ականների» /հոգեգալստականներ/ աղանդը²⁶: Տարածված աղանդներից է նաև մորմոնականությունը: Սյունիքում, Վայոց ձորում, Շիրակում, Կոտայքի, Լոռու մարզերում եւ Արարատյան դաշտում վերջին տարիներին մեր կողմից կատարված ազգագրական դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում աղանդների առաջացումն ունի մի քանի պատճառ.

- ա) հետխորհրդային ժամանակաշրջանին հավատքի եւ ոգեղենության վակուումը,
 - բ) բարոյական եւ հասարակական արժեքների դաշտում կատարված բացասական փոփոխությունները,
 - գ) հասարակության մեջ անհատի արժեքային դերի կորուստն ու իմաստազրկումը,
 - դ) հասարակության մեջ ունեցվածքային շերտավորման խորացումը,
 - ե) աշխատանքային զբաղվածության եւ ստեղծագործ աշխատանքի բացակայության պատճառով մարդու ինքնադրսեւորման հնարավորությունների սահմանափակումը:
- Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ հասարակական շերտավորման

²⁵ ԴԱՆ.:

²⁶ Հայաստանում աղանդների մասին տես՝ Մայիլյան Ս, Ժամանակակից աղանդներն ու Հայոց պետականությունը/Եկեղեցի եւ պետություն/ Միջազգային գիտաժողովի նյութեր, Երեւան, 2000 , 227-257:

տեսանկյունից աղանդավորների գերակշիռ մասը պատկանում է հատկապես անապահով եւ կրթական-տեղեկատվական առումով ցածրամակարդակ խավերին: Տնտեսական գործունեության առումով նրանք հիմնականում գոյատևման ծանր վիճակում հայտնված եւ հոսալքված մարդիկ են:

Ներկայացնենք մեր դիտարկումների արդյունքում երեւակված մի հանգամանք եւս: Աղանդավորների շարքում մեծ թիվ են կազմում մարդիկ, որոնց հարազատների, ընկերների ու բարեկամների շրջանակը շատ նեղ է: Մեծ թիվ են կազմում միայնակ կանայք (ամուսինը լքել է արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով, պարզապես բաժանվել է, ամուսինը մահացել է, ունի ընտանեկան սուր բախումներ, ընտանիքում ճնշված վիճակում է, գուրկ է ընտանեկան զգացողությունից), լքված կամ միայնակ ծերերը, դժբախտության կամ աղքատության մեջ գտնվող, շրջապատից լքված վիճակում հայտնված մարդիկ²⁷: Նման փաստի հաճախականությունը պատահական չէ եւ սերտ կապված է հասարակության մեջ գործող գոյատևման ռազմավարության մեջ մեխանիկական ձևերի գերակշռության հետ: Փաստորեն, սեփականության եւ հասարակական դերերի փոխանակային գործընթացներին մեխանիկական կապերի միջոցով գործակից դառնալու եւ հասարակական համերաշխության մթնոլորտում ապահով զգալու հնարավորություն այս մարդիկ չունեն: Մյուս կողմից՝ հասարակական համագործակցության սահմանները նեղ են, որին համամասնակից դառնալու հնարավորությունը եւս բացառված է այս խավերի ունեցվածքային և կրթական-մասնագիտական ցածր ցենզի պատճառով: Ուստի, նրանցից շատերի համար աղանդներին հարելը մեխանիկական կապերի ստեղծման ու նաև ապահով օղակ է: Այսինքն, հավատալիքի գործոնից զատ, աղանդներին հարելը Հայաստանում որոշ մարդկանց համար նաև հոգեբանական մեկուսացվածությունը հաղթահարելու յուրահատուկ ձև է, եւ աղանդների առաջացման պատճառները բխում են գլխավորապես հասարակական համագործակցության խմբակային-մեխանիկական իրավիճակից: Աղանդներին մարդկանց հարելը ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև գոյատևման ռազմավարության առաջացրած հասարակական բնույթի պատճառներ. համատարած բարոյազրկում, հասարակական դերերի եւ կապերի կորուստ, անապահովության եւ սոցիալական վախի զգացումների մթնոլորտ, հասարակական համագործակցության մեխանիկական բնույթ:

Աղանդը մարդու հնարավորություն է տալիս իրեն զգալ հավատակից «եղբայրների» ու «քույրերի» ընտանիքում, ապրել դրա մեխանիկական կապերի եւ արժեքների ստեղծած ապահովության դաշտում՝ ծառայելով դրանց ինք-

²⁷ ԴԱՆ.:

նադրսեւորմանը, խմբակային դերի ու մարդկային արժեքի զգացումի բարձրացմանը եւ, անհրաժեշտության դեպքում, նաեւ գոյատեւմանն անհրաժեշտ նյութական աջակցություն ստանալուն: Ահա թե ինչու բնակչության այդ խավը հավատքի հետխորհրդային վակուումում իր «հավատքի գալը» սկսեց այս կամ այն աղանդին հարելով: Աղանդավորական շարժումը, լինելով կրոնական այլ ուղղությունների, հատկապես, հայ հասարակությանը համախմբող կրոնական հաստատության՝ Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ անջատողական երեւոյթ, խոչընդոտում է հոգեւոր հիմքի վրա հասարակության համերաշխության եւ համախմբման գործընթացները՝ ոչ միայն կրոնական, այլեւ ընդհանրապես հասարակական համագործակցության տեսանկյունից:

Աղանդավորության վտանգներից գլխավորը թաքնված է դրան հարողների մոտ էքնիկ ինքնագիտակցության թուլացման մեջ: Աղանդավորական հանրոյթին միավորող հոգեւոր արժեքային դաշտը ոչ միայն չունի ազգային բովանդակություն, այլև իր քարոզչությամբ ժխտում է այն: Այս առումով առավել մեծ վտանգ է ներկայացնում արդի հայաստանյան իրականության մեջ մեծ տարածում ստացող եհովայականների աղանդը: Այս աղանդի առանձնահատկությունն այն է, որ այն նպատակամղված ձեւով հակաքարոզչություն է տանում Հայ Առաքելական եկեղեցու եւ նրա կողմից ընդունված ազգային բնույթ ու ժողովրդական տարածում ունեցող տոնածիսական երեւոյթների դեմ: Եհովայականների կողմից, մասնավորապես, բացասական երանգավորումներով հակաքարոզչություն է տարվում հայ ժողովրդի մոտ խիստ տարածում ունեցող քրիստոնեական արարողությունների՝ կնունքի, մատաղի եւ մոմ վառելու ծիսակատարությունների դեմ: Նկատենք, որ այս երեք ծիսակատարությունները հենց նրանք են, որոնք մի կողմից՝ նպաստում են եկեղեցու հետ ժողովրդի ու ազգային կապը, եւ մյուս կողմից՝ ամրապնդում հայի քրիստոնյա լինելու դավանաբանական ինքնագիտակցությունը: Ուստի, այս աղանդը ոչ միայն վնասակար է Հայ Առաքելական եկեղեցու, որպես հայ ժողովրդի կրոնա-դավանաբանական կառույցի, այլեւ հայ ժողովրդի հոգեւոր մշակույթի համար: Կրոնական այս աղանդը կարելի է ասել, որ դուրս է գալիս կրոնական խղճի եւ դավանանքի ոլորտներից եւ միջամտում մեր ազգային և մշակութային կյանքի ինքնատիպության անվտանգության խնդիրներին՝ փորձելով իր հետեւորդներին օտարել ազգային հոգեւոր մշակույթի բաղկացուցիչը կազմող առանցքային նշանակություն ունեցող ծիսական արարողություններից:

Ինչպես եհովայական աղանդը, այնպես էլ մնացած բոլոր աղանդները հայ հասարակության համար բացասական նշանակություն ունեն այն հիմնական պատճառով, որ Հայ Առաքելական եկեղեցին ոչ միայն կրոնադավանաբանա-

կան, այլեւ մշակութային ինստիտուտի գործառույթ է իրականացնում: Սա մեր ազգային առանձնահատկությունն է: Թերեւս, դա է պատճառը, որ քրիստոնեությունը մեր ժողովրդի մեջ իր ներքին աստվածաբանական բովանդակությամբ չնայած այնքան էլ խոր ընկալումներ չունի, սակայն քրիստոնյա լինելը հայի էքնիկ ինքնագիտակցությունը պայմանավորող ամենաառանցքային տարրն է: Հենց այս պատճառով է, որ եկեղեցու, որպես քրիստոնեական հավատքի ազգային ինստիտուտի, դերակատարությունը ազգի հոգեւոր ընդհանրականությունը պահպանելու տեսանկյունից արմատական գործոն է: Հետեւաբար, Հայ Առաքելական եկեղեցին, անկախ աղանդների գործունեության ծավալներից, ունի իր խնդիրները, որոնց խորապես հետամուտ լինելն էլ կարող է ազգի հոգեւոր ընդհանրականությունը եւ բարոյականությունը ամրապնդել այն աստիճանի, որ նույնիսկ աղանդների գործունեությունը վտանգավոր չի կարող լինել: Միանշանակ է, որ աղանդների տարածումը մեր եկեղեցու թուլությունից է: Եվ առաջին հերթին, նրա՝ որպես հոգեւոր առաջնորդողի, թուլությունից: Հատկապես երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա-ից հետո հաջորդած կաթողիկոսները, հասարակության լայն շրջանակների կարծիքով, չունեն այն անհրաժեշտ ոգեղենությունը, որը պահանջում է հայոց գլխավոր հոգեւոր հովվի կերպարը: Չափազանց բացասական է գնահատվում ժողովրդի կողմից նաեւ կաթողիկոսական վերջին ընտրություններին նախորդած «նախընտրական պայքարը», որն իր բանբասանքային մթնոլորտով եւ նախընտրական քաջքշուկով (ինչը լայնորեն լուսաբանվում էր նաեւ մեր, այսպես կոչված, անկախ մամուլի կողմից), հավասարվեց քաղաքական ընտրություններին: Ավելին, մամուլի որոշ օրգաններում փորձ արվեց նույնիսկ խեղկատակ մոտեցումներ ցուցաբերել մեր եկեղեցու մի շարք մասունքներ Հայաստան տեղափոխելու փաստի կապակցությամբ: Եկեղեցու վարկին ոչ պակաս բացասաբար անդրադարձավ նաեւ Ռուսաստանի թեմի աթոռի համար Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի նախաձեռնությամբ սկսված պայքարը: Հատկապես դատապարտելի գնահատականի արժանացավ Գարեգին Բ-ի կողմից իր եղբորը թեմական առաջնորդ նշանակելու միջադեպը, որը ժողովուրդը հավասարեցրեց քաղաքական պաշտոնակազմի վերջին եւ պետական բարձր պաշտոններում բարեկամ, ծանոթ, ընկեր նշանակելու արատավոր երեւոյթի հետ:

Այսինքն, եկեղեցին ինքն այսօր, իր ներքին վիճակը բարոյականացնելու խնդիր ունի, քանի որ այդ անկայուն վիճակն անդրադառնում է եկեղեցու նկատմամբ հասարակության վերաբերմունքի վրա, եւ եթե ազգամվիրության բարոյական նորմերը թույլ են եկեղեցական կառույցի ներսում եւ անհատականը գերակայում է հավաքականին, ապա եկեղեցին չի կարող կատարել ազ-

գի հոգեւոր առանցքի շուրջ համախմբումն իրականացնողի իր պատմական գործառույթը:

Երկրորդ խնդիրը վերաբերում է եկեղեցի-ժողովուրդ կապի անմիջականացմանը: Դարասկզբին հայկական համայնքներից համարյա բոլորում եղել են հոգեւոր հովիվներ, որոնք ուղղակիորեն իրականացրել են եկեղեցի-ժողովուրդ կապը, դրանով իսկ կանխարգելելով օտար դավանաբանական երեւոյթների մուտքը հայկական միջավայր: Այսօր էլ, մեր ազգագրական դիտարկումները ցույց են տալիս, որ մեր ժողովուրդը շարունակում է օգտվել իր բնակավայրերում կամ դրանց շուրջ գտնվող քրիստոնեական սրբատեղիներից: Սակայն խնդիրն այն է, որ հոգեւոր ոլորտում ժողովուրդը եկեղեցականների մասնակցության անբավարարության պատճառով զբաղված է մի տեսակ ինքնագործունեությամբ: Եկեղեցու կրավորականության պատճառով մարդիկ չեն տիրապետում հավատքին առնչվող տարրական գիտելիքների, ինչն էլ հաճախ պատճառ է դառնում ոչ քրիստոնեական աղանդներին շփոթելու քրիստոնեական հավատքի հետ: Հատկապես դա հմուտ ձեռով օգտագործում էին եհովայականներն իրենց հոգեորության արշավների ժամանակ: Այսօր էլ ժողովրդի մեջ, անգիտությունից բխող, ընդունված կարծիքի համաձայն եհովայականությունը դիտվում է որպես քրիստոնեական աղանդ:

Այսինքն, երկրորդ խնդիրն այն է, որ Հայ Առաքելական եկեղեցին պետք է համայնքներում ունենա իր սպասավորները, որպեսզի ժողովրդի հոգեւոր պահանջմունքների բավարարումն իրականացնի ինքը, այլ ոչ թե թողնի դա անելու աղանդներին: Եթե մարդիկ հարում են աղանդներին, նշանակում է նրանք հոգեւոր սննդի կարիք ունեն, նշանակում է նաեւ, որ մեր եկեղեցին իր այդ դերը չի իրականացնում: Նկատենք, որ դա հայ եկեղեցու ավանդական դերակատարություններից է եղել, որով նա նաեւ իրականացրել է իր հայապահպան ու մշակութապահպան գործառույթը: Մեր պատմության ընթացքում, հավանաբար, մեր եկեղեցին երբեք այսքան հեռու չի գտնվել ժողովրդից, որչափ այսօր է նա հեռացած:

Կցանկանայինք այս դիտարկումով էլ ամփոփել վերլուծության այս բաժինը եւ նկատել, որ եկեղեցին այսօր ունի երկու հիմնական խնդիր՝

Ներքին՝ իր ներքին կառույցն ամրապնդելու եւ դրանում ոգեղեն բարոյականությունը խստացնելու ու ամրապնդելու, որպեսզի այն չտարածվի հասարակության վրա եւ բացասաբար չհանդարտառնա եկեղեցու ժողովրդական հեղինակության պահպանման դարավոր ավանդույթների վրա,

Արտաքին՝ ժողովրդի հետ եկեղեցու ավանդական կապերի հաստատման միջոցով մարդկանց հոգեւոր կարիքների բավարարման իրականացում:

5. Պետության խնդիրները հոգեւոր անվտանգության եւ ազգային բարոյականության միջավայրի ձեւավորման գործում

Հայոց մոր պետականության կերտումը, որի անկախության հաստատման պաշտոնական տարեթիվը չնայած 1991 թվականն է, սկսվեց դեռեւս Խորհրդային Միության շրջանում՝ 1988 թվականին: Արցախյան հիմնահարցով պայմանավորված շարժումը հետագա տարիներին, երբ հասարակության մեջ ձեւավորվեց այն համոզմունքը, որ արտաքին օգնությամբ խնդիրը չի լուծվելու, եթե չապավինենք սեփական ուժերին, վերածվեց ազգային ազատագրական շարժման, որի ընթացքում ուրվագծվեց եւ հստակեցվեց նաեւ անկախ պետականության ձեւավորման իմաստավորումը: Պետականության գաղափարը համախմբված պայքարի ելած ժողովրդի համար ուներ ոչ միայն իրական, այլեւ հոգեւոր նշանակություն: Մինչեւ պետականության հաստատումը, ըստ էության, համաժողովրդական հանրահավաքային քննարկումներում հստակեցվեցին նաեւ մեր պետության ձեւավորման հոգեւոր եւ բարոյական հիմքերը, որոնց առանցքում ընկած էին մի քանի հիմնական գաղափարներ.

- ինքնիշխանություն եւ ազատություն,
- ազգային պետության մեջ ազգի բոլոր անդամների համար հավասար պայմանների ձեւավորում,
- ազգային պետության մեջ ապրողների միջեւ արտոնյալության եւ խտրականության բացառում,
- երկրի կառավարման մեջ ժողովրդի կամքի հաշվառում կառավարող - ժողովուրդ անջրպետի վերացում եւ բացառում,
- ազգային համագործակցության մեջ արդարության երաշխավոր իշխանության ձեւավորում եւ վերարտադրություն,
- սեփական անկախության եւ պետական տարածքի անձեռնմխելիության ապահովում:

Եթե որակելու լինենք այն գաղափարական հենքը, որն, ըստ էության, պայմանավորում էր ժողովրդին հոգեւոր եւ բարոյական մեկ առանցքի շուրջ համախմբումը, ապա կարելի է դա ձեւակերպել երկու բառի շրջանակներում՝ ազգային համախմբվածություն եւ ժողովրդավարություն: Կամ այլ կերպ՝ ժողովրդավարություն ազգային պետության շրջանակներում:

Որքանով են այսօր առկա մեր պատմության մեջ անմախաղեպ համախմբվածության մթնոլորտում առաջադրված հոգեւոր-բարոյական սկզբունքները եւ գաղափարական դրույթները, որոնց վերականգնումը, պահպանումը եւ վե-

րարտադրությունը, մեր կարծիքով, այն հիմնական խնդիրն է, որը պետք է դնել պետական կառույցների՝ որպես 1991 թվականին ազգի կողմից ձեռնարկված կառավարման օղակի առջև:

Պետականության հոգեւոր արժեքի եւ այն ձեռնարկող ժողովրդի բարոյականության հիմքերն ընդհանրապես դրվում են նոր պետական-քաղաքական կարգի հաստատման սկզբում, իսկ այնուհետեւ բոլոր իշխանությունների խնդիրը դառնում է մի կողմից՝ պետության ինքնիշխանության, մյուս կողմից՝ հասարակական, մշակութային, քաղաքական եւ տնտեսական ոլորտներում պետության կարգավորիչ դերի ապահովումը:

Առավել առարկայական պատկերացում կազմելու համար փորձենք Հայոց պետականության հոգեւոր-բարոյական հիմքերի բնութագրումը տալ հատկապես վերջին տասնամյակում՝ մեր երկրում ձեռնարկված իրողություններից ելնելով:

Արդեն մշտնջենք այն գաղափարները, որոնք 1988-1991 թվականներին ձեռնարկվել էին մեր ժողովրդի համախմբման հոգեւոր եւ բարոյական արժեքային առանցքը, ինչի արդյունքը եղավ Հայոց պետականության վերականգնումը: Նոր պետական կառույցի ձեռնարկման նախօրեին եւ առաջին տարիներին մարդիկ այդ պետականությունն իմաստավորում էին որպես յուրաքանչյուր հայի համար աշխարհում ամենից նպաստավոր միջավայրը, ուր մարդը կարող էր ստեղծագործ աշխատանքի տրվել, վաստակել ինքը եւ ծաղկեցնել երկիրը: Դրանից ելնելով էլ մարդկանց համար նոր ձեռնարկվող պետության առանցքային արժեքային գաղափարը պետական պաշտոնյայի պատասխանատվությունն ու հավատարմությունն էր ազգային եւ հասարակական շահերի առջև: Սա ուներ նաեւ իր բարոյական ենթատեքստը, որի համաձայն, պետական պաշտոնյան չպետք է լիներ կաշառակեր, անձնական շահը պետականից ու հանրայինից գերադասող եւ օտարված ժողովրդից՝ վերջինիս հուզող խնդիրներից եւ մտահոգություններից:

Պետականության հոգեւոր-բարոյական հիմքերի խախտումը պետական իշխանությունը ներկայացնող ինստիտուտների կողմից սկսվեց արդեն 1991 թվականից: Խոսքը վերաբերում է ժողովրդին իշխանությունից օտարմանը 1991-1995 թթ. ընթացքում: 1991 թվականին պետականության հաստատումը չուղեկցվեց իշխանությունների ձեռնարկման գործընթացով եւ որպես օրենսդիր իշխանության մարմին պահպանվեց դեռեւս Խորհրդային Միության օրոք ընտրված Գերագույն խորհուրդը: Մինչպետական շրջանում ընտրված պատգամավորները շարունակեցին մնալ իրենց տեղերում եւ ձեռնարկել օրենքներ՝ առանց անկախ պետականության ձեռնարկման վերաբերյալ իրենց ծրագրերը ժողովրդին ներկայացնելու եւ դրա հիման վրա ընտրվելու: Կա-

տարվածը, փաստորեն, նպաստեց նրան, որ նախորդ պետության մեջ ձեռնարկված օրենսդիր մարմնում ընտրված պատգամավորները ձեռնարկեին նորանկախ երկրի օրենսդրական դաշտը չորս տարի շարունակ: Իսկ այս չորս տարիներն այն առանցքային տարիներն էին, որոնք կանխորոշեցին երկրի հետագա զարգացումը: Ընդունվեցին օրենքներ, որոնց հետեւանքով ժողովուրդը ոչ միայն օտարվեց իշխանությունից, այլեւ տնտեսական ակտիվ գործունեության հնարավորություններից: Պետականության ձեռնարկման առաջին տարիներին իշխանությունն ունեցող մարդիկ ի գորու չեղան հավատարիմ մնալու այն բարոյականությանը, որի վերարտադրության ակնկալիքով մարդիկ վստահել էին իշխանությունը նրանցից շատերին: Իշխանությունն սկսվեց անխնա ձեռնարկել ծառայեցվել մասնավոր շահերին, ավելին, սկսվեց պետական եւ հասարակական շահերի ստորակարգումը մասնավոր շահերին: Պետությունը եւ նրա հաստատությունները դրա մատչելիությունն ունեցողների կողմից օգտագործվեցին հանրային եւ հասարակական կարողությունները յուրացնելու եւ հարստանալու նպատակով: Հարկ է նկատել, որ արդեն 1992 թ. երկրում կոռուպցիան լուրջ արմատներ էր գցում, որի կանխարգելմանն անգոր եղավ նույնիսկ ՀՀ նախագահի հրամանագիրը²⁸: Սկսվեց պետական իշխանության ինստիտուտների խմբակայնացումը, եւ դրա հիման վրա երկրում «արտոնյալների» ու «ոչ արտոնյալների» դասերի ձեռնարկումը, որը արմատականորեն հակասում էր 1988-1991 թթ. պետականության ձեռնարկման հիմքում դրված հոգեւոր-բարոյական վերը ներկայացված առանցքային սկզբունքներին: Հատկապես «արտոնյալության» արատավոր վարքը ժողովրդի մոտ առաջացրեց գործող իշխանությունների նկատմամբ խիստ հակակրանք եւ նրանց գործելաճը որակվեց որպես դավաճանություն իր պետականությունը վերականգնած ժողովրդի հանդեպ: Ի հայտ եկած հայկական լիբերալիզմի հայրերն սկսեցին ժողովրդին բացատրել, որ այն, ինչ կատարվում է, բնական երեւոյթ է²⁹, որը անցել է զարգացման գնացող ցանկացած երկիր: Հովանավորչությամբ հանրային ունեցվածքի յուրացումը որակվեց որպես «նախնական կապիտալի կուտակում», «վայրի կապիտալիզմ» եւ այլն: Սակայն դրա հետեւանքով ժողովրդի հավատը չհաջողվեց պահել, քանի որ ակնհայտ էր, որ գործող իշխանությունը հրաժարվել էր հանուն ազգային պետության ձեռնարկման համախմբված ժողովրդի հոգեւոր եւ բարոյական հիմնա-

²⁸ Տե՛ս՝ ՀՀ նախագահի հրամանագիր, թիվ 390 «Պաշտոնական դիրքի չարաշահումների եւ կոռուպցիայի դեմ պայքարն ուժեղացնելու մասին», 1 սեպտեմբեր, 1992 թ.:

²⁹ Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի եւ դրանից դուրս գալու ելքերի մասին, Երեւան, 2000, էջ 21-27:

րար արժեքներից ու գաղափարներից: Երկրի նախագահի՝ ըմբռնունով մոտե-
նալու կոչերը նույնպես երկար չկարողացան պահպանել ժողովրդի հավատը:
Մարդիկ համոզվեցին, որ իշխանության եկածները ծառայեցնում են դա այն
նույն ժողովրդի դեմ, ով ձեռք էր բերել անկախությունը: Դա հանգեցրեց նաեւ
պետականության, պետական հաստատությունների եւ պետական խորհրդա-
նիշների արժեզրկմանը: Խոսքը վերաբերում է նրան, որ պետական, այդ
թվում նաեւ բարձրագույն պաշտոններ կրող անձինք իրենց ոչ կոմպետենտու-
թյան եւ պետական պաշտոնյայի բարոյական կոդեքսի բացակայության
պատճառով, պետական պաշտոնը նույնացնում էին անձի հետ եւ չէին կարո-
ղանում տարբերակել անձը ինստիտուտից: Դրա հետեւանքով ինստիտուտ-
ները եւ պաշտոնները ծառայեցվում էին գլխավորապես անձնական շահերի,
և պետական ինստիտուտը կորցնում էր իր հասարակական գործառույթը,
հետեւաբար եւ որոշակի ժամանակում արժեզրկվում: Այս ամենի հետեւան-
քով ժողովուրդը նույնպես սկսեց պետական ինստիտուտը նույնացնել անձե-
րին: Պետական պաշտոնյաի անձնական բարոյալքվածությունը Հայաստա-
նում հանգեցրել է ժողովրդի համախմբման գործում պետական ինստիտուտի
հոգեւոր գործառույթի կորստի: Ներկայումս միանշանակ կարելի է պնդել, որ
պետական ինստիտուտները Հայաստանում որեւէ ձեւով չեն իրականացնում
այն հոգեւոր համախմբիչ գործը, որը համարվում է պետական ինստիտուտի
բնորոշ գծերից մեկը, եւ դրանով իսկ պայմանավորում քաղաքացիների հայ-
րենասիրական նվիրվածությունը պետությանը, այն ներկայացնող խորհրդա-
նիշներին եւ ժողովրդին:

Այս առումով պետականության հոգեւոր հիմքերի ամրապնդման գործում
առանցքային նշանակության խնդիր է պետական ինստիտուտները, հատկա-
պես բարձրագույն, դրանցում պաշտոն զբաղեցնող անձերից տարանջատ-
ման մեխանիզմների ձեւավորումը:

Հայաստանում ներկայումս ստեղծված իրավիճակը բնութագրելու դեպ-
քում կարելի է ասել, որ պետությունը չի կատարում իր՝ որպես հասարակու-
թյան քաղաքական ինստիտուտի գործառույթները եւ ծառայում է իշխանու-
թյան մեխանիկական մատչելիություն ունեցող խմբակային շրջանակներին:
Դա հետեւանք է պետական պաշտոնյաների կողմից իշխանության չարաշահ-
ման:

Նման իրավիճակներում սովորաբար հասարակությունը կամ՝ կենտրոնաց-
նում է իր ներքին ռեսուրսներն ու կարողությունները եւ առողջացնում քաղա-
քական համակարգը, կամ՝ սկսվում է հասարակական-պետական համակար-
գի քայքայումը: Հայաստանում ընթացող ներկայիս զարգացումները թույլ են
տալիս ասելու, որ մենք մոտ ենք երկրորդ տարբերակին: Խոսքն այն մասին

է, որ հասարակության քաղաքական վարքում ներկայումս գնալով խորանում
է արեսնտեիզմի վիճակը: Պարզ ասած, սա մի վիճակ է, երբ մարդիկ անտար-
բեր են դառնում այն աստիճանի, որ չեն փորձում որեւէ ձեւով մասնակից
դառնալ պետական-հասարակական կյանքին: Հայաստանի բնակչության մե-
ծամասնությունը ներկայումս գտնվում է հավատի եւ վստահության խոր ճգ-
նաժամի մեջ: Այդ ճգնաժամի հիմնական պատճառը, ինչպես փորձ արվեց
ցույց տալ, պետական ինստիտուտների հետ հասարակության կապը պայմա-
նավորող հոգեւոր-բարոյական արժեքների նշանակության անտեսման մեջ է:
Խնդիրն այն է, որ այդ արժեզրկման պատճառները հիմնականում իշխանու-
թյան եւ այն ներկայացնող անձերի ներկայիս բարոյազրկվածության մեջ է:
Դրա տակ հիմնականում նկատի ունենք պետական պաշտոնյայի մոտ ընդհա-
նուրի առջեւ պատասխանատվության բացակայությունը: Հարկ է նկատել, որ
վերջինս էլ իր հերթին պատճառաբանվում է պատասխանատվության իրակա-
նացումը վերահսկող գործում եւ արդյունավետ մեխանիզմների բացակայու-
թյամբ:

Ստեղծված իրավիճակից ելքերը շատ չեն: Մենք կարող ենք առաջարկել
ընդամենը մեկը:

Խոսքը վերաբերում է իշխանության օղակներում ներգրավված պաշտոն-
յաների մոտ բարոյական այնպիսի կոդեքսի ձեւավորմանը, որը կբացառի իշ-
խանության ինստիտուտի եւ անձի նույնականացումը, ինչն էլ իր հերթին թույլ
չի տա պաշտոնը անձնական շահերին ծառայեցնելը: Հարկ է խոստովանել,
որ Հայաստանի պետական իշխանության համակարգը խիստ անառողջ եւ
«վարակված» վիճակում է: Այս առումով առաջին քայլը պետության բարձրա-
գույն իշխանություն ներկայացնող անձինն է, որի քաղաքական կամքի ցու-
ցաբերումը՝ անձը նախագահի ինստիտուտից տարանջատելու ուղղությամբ
վճռորոշ կարող է լինել Հայաստանի հետագա ճակատագրում: Դա կնպաստի
նրան, որ նախագահի ինստիտուտը կծերբազատվի առկա հասարակական
օտարվածությունից եւ հնարավորություն կստանա պետական այլ ինստի-
տուտների առողջացման գործում հասարակական աջակցություն ստանալ:
Սա քաղաքական յուրահատուկ մշակույթ է, որի կրողները մեր իշխանության
վերնախավում դեռեւս բացակայում են կամ լավագույն դեպքում առկա են,
բայց ազդեցիկ չեն:

Ավելի պարզ ասած, Հայաստանում պետական հաստատությունների հո-
գեւոր-բարոյական դերի վերկանգնումը առանձնակի եւ ուղղակի փոխկա-
պակցվածության մեջ է այդ ինստիտուտի հասարակական այն գործառույթի
հետ, որը պարզորոշվել է դեռեւս պետականության ձեւավորման նախնական
փուլում: Պետական ինստիտուտների հասարակական գործառույթի կորուս-

տը հանգեցնում է դրանց արժեզրկմանը, քանի որ, եթե ազգային պետությունը չի ապահովում ազգի անդամների հիմնական մասի /եթե ոչ բոլորի/ գաղափարների իրացման եւ մարդկային զարգացման հավասար հնարավորություններ, ապա այն կորցնում է հոգեւոր առանցքի իր դերակատարությունը: Եթե պետությունը, որպես հասարակական բարձրագույն հաստատություն, չի ծառայում ողջ հասարակությանը, այլ ծառայեցվում է իշխանությունը վերցրած եւ դրանով իսկ իր համար արտոնյալի կարգավիճակ ստեղծած խմբին, դադարում է հասարակական արժեք լինելուց: Հետեւաբար, թե՛ ազգային անվտանգության եւ թե՛ պետության հոգեւոր համախմբիչ դերակատարության համար պետության հասարակական գործառույթի վերականգնումն առաջնային կարեւորության խնդիրներից պետք է համարել: Իսկ պետության հասարակական գործառույթի վերականգնումն, ըստ էության, Հայաստանում վերջին տասնամյակում ձեւավորված իրողության մեջ հնարավոր է իրականացնել պետական հաստատությունների եւ հասարակության օտարվածության հաղթահարման միջոցով: Պետական հաստատությունների օտարվածության հիմնական պատճառներից մեկը պետական պաշտոնյաների կողմից պետական ինստիտուտները մասնավոր շահերին ծառայեցնելն է եւ դրա վերացումը, ինչպես նշվեց, առաջին քայլը պետք է համարել:

Հաջորդ քայլը պետական հասարակական ինստիտուտների գործառույթներում այնպիսի տարրերի վերականգնումն է, որոնք, որպես պետականության իդեալներ համախմբիչ դեր կատարեցին անկախության վերականգնման համար ժողովրդական պայքարում: Հայ ժողովուրդը կարող է կապվել հոգեւոր կապերով այնպիսի պետության հետ, որի կերպարը նա ձեւավորել է դեռևս 1988-1991 թթ.:

Պետության հետ հոգեւոր կապի վերականգնման պայմանը, ինչպես նշվեց, պետությունից երկրի բնակչության օտարվածության հաղթահարումն է եւ այդ ճանապարհով պետական հաստատությունների ծառայեցումը ժողովրդին: Պետության հետ ժողովրդի կապի մեխանիզմը դա օրենքն է, որի միջոցով ապահովվում է իրավահավասարությունը եւ անվտանգությունը: Սակայն, որպեսզի օրենքներն իրականացնեն իրենց այդ գործառույթը, անհրաժեշտ է, որպեսզի դրանք ծառայեն ժողովրդին, այլ ոչ իշխանության մատչելիություն ունեցող խմբակային շրջանակներին, որոնց ձեռքում օրենքը վեր է ածվում ժողովրդին վախի եւ ենթակայության մեջ պահելու գործիքի: Նման դեպքում, օրենքի նկատմամբ ժողովրդի մոտ ձեւավորվում է հակակրանք, ինչպիսին որ կարելի է բնութագրել հենց Հայաստանում ձեւավորված առկա իրավիճակը: Այս իրավիճակի հաղթահարումն իշխանությունների, հատկապես օրենսդիր իշխանության, ձեւավորման գործընթացին հասարակության լիարժեք եւ

իրական մասնակցության ապահովումն է:

Պետության դերի զգացողության ձեւավորման հաջորդ կարեւոր պայմանը հետադարձ կապի սկզբունքի պահպանումն է կառավարման գործում: Սրա նպատակը կառավարությունում կայացվող որոշումներին եւ վճիռներին հասարակության մասնակցության ապահովումն է՝ դրա իրականացմանը կոչված ոչ կառավարական ու կառավարական հաստատությունների միջոցով: Պետությունը պետք է շահագրգռված լինի հասարակությանը պետական կառավարման ոլորտին մասնակից դարձնելով, քանի որ միայն այդ միջոցով է հնարավոր ապահովել հասարակությունից պատվերների իջեցումը կառավարման ոլորտին, հետեւաբար եւ կառավարումն իրականացնել հասարակական շահերին ծառայեցնելու սկզբունքով: Սա կարեւոր է կառավարող էլիտա-հասարակություն անջրպետը հաղթահարելու իմաստով նույնպես, որը նպաստում է հասարակության լայն զանգվածների գիտակցության մեջ կառավարող էլիտայի նկատմամբ հակադրվածության մեղմացմանը կամ վերացմանն ընդհանրապես:

Հատկապես հետադարձ կապի սկզբունքի իրացման մեխանիզմների գործարկման առումով կարեւոր է հասարակական ինստիտուտների եւ կառավարման ինստիտուտների միջեւ գործում համագործակցությունը, որում կառավարման ինստիտուտներն ապահովում են կառավարման ոլորտում ընդունվող որոշումների եւ վճիռների մասին թափանցիկ տեղակատվություն հասարակական ինստիտուտներին: Վերջիններս այդ տեղեկատվությունը հասու են դարձնում հասարակության ավելի լայն շրջանակներին, նրանցից ստանում հավաստիացում կամ նոր առաջարկներ եւ դրանք ներկայացնում կառավարման ինստիտուտներին, որոնք էլ իրականացնում են կառավարումը «ներքեւից» եկող կարծիքներին համապատասխան:

Ամփոփելով, կարելի է ասել, որ պետության դերը հոգեւոր անվտանգության ապահովման գործում, առաջին հերթին, պայմանավորված է հասարակության հետ պետական հաստատությունների կապի ապահովման, պետական հաստատությունների հասարակական գործառույթի վերականգնման ու ամրապնդման, դրանք ոչ թե մասնավոր ու խմբակային, այլ հասարակության շահերին ծառայեցնելուն, մարդկանց մոտ հասարակական-պետական պարտքի զգացողության ու բարոյականության ձեւավորման եւ օրենսդրության սահմաններում օտարածին հոգեւոր «ինտերվենցիաների» դիմագրավման հանգամանքով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
1. Արժեքային գործընթացները եւ միտումները ետխորհրդային շրջանում.....	7
2. Մշակույթի դերը հոգեւոր ընդհանրականության ձեւավորման գործում.....	24
3. Հասարակական կառույցների դերը հոգեւոր անվտանգության եւ ազգային բարոյականության միջավայրի ձեւավորման գործում	38
4. Հայ եկեղեցու դերը էթնիկ հանրույթի հոգեւոր բարոյական հիմքերի ձեւավորման գործում.....	50
5. Պետության խնդիրները հոգեւոր անվտանգության եւ ազգային բարոյականության միջավայրի ձեւավորման գործում.....	57

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառայած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի մանասոիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գենոֆոնդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,

- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,

- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,

- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,

- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,

- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,

- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,

- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,

- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,

- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,

- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,

- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,

- հայկական շարունակականության հայեցակարգը,

- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,

- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,

- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճամաչունը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,

- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,

- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառույթները,

- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,

- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,

- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,

- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հազար-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրանիկ Մարգարյան - ՀՀ Վարչապետ

Մանուկ Թովուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի տեղակալ

Լևոն Սկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար

Տիգրան Սարգսյան – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Արա Ավետիսյան – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com